

ՀԱՅ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԻՐ ԴԵՐԸ




ՄԵՐՈՒԺԱՆ ՔՇՆՅ. ՏԷՐ-ԽՈՍՐՈՎ

(ԳԱՏԸ-ԳԻՒՂՑԻ)



ՏՊԱՐԱՆ «ՄԱՍԻՍ» ՓԱՐԻԶ

1927



Ընդհանուր երկրային տեղեկագրեր
Ընդհանուր տարածված լինելու համար

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԻՐ ԴԵՐԸ

Առաջ քաշված
Մեծագույն



ՄԵՐՈՒԺԱՆ ՔԶՆՅ. ՏԵՐ-ԽՈՍՐՈՎ
(ԳԱՏԸ-ԳԻՒՂՑԻ)

1927

ՏՊԱՐԱՆ ՄԱՍԻՍ ՓԱՐԻՋ
208bis ԼԱՖԱՅԵԹ ՓՈՂՈՑ

862.

ԱՌ ՀՈԳԵԻՌՐ ԾՆՈՂՍ

ԳԵՐ, ՏԵՐ ՎՌԱՄՇԱՊՈՒՅ Ս, ԵՊՍ, ՔԻՊԱՐԵԱՆԻ

ՈՐՈՒԱԿԱՆ ԱԿՆԱԾԱՆՕՐ

ՄԵՐՈՒԺԱՆ ՔՂՆՅ.

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԻՐ ԴԵՐԸ

Այն պահուն, երբ եկեղեցւոյ վերագարթնումի եւ վերակազմութեան նոր շարժում մը կը նշմարուի, յետագարձ ակնարկով մը անկարելի է կանգ չառնել այն սրբազան շիրիմներուն առջեւ, որոնց վրայ թէեւ ո՛չ մէկ արձանագրութիւն, որոնց շուրջը ո՛չ մէկ փթթող ծաղիկ, որոնց կողքին ո՛չ մէկ խա՛չ, եւ սակայն կը ներկայացնեն մարտիրոսացած ու նահատակ հայ. եկեղեցականութեան զոհաբերումի խորանը, ուր, քրիստոնէութեան անունով, բազմաշարձար ժողովուրդ մը իր աննախընթացօրէն անաւոր ողջակիզումի պատարագը մատոյց իր ընտրեալներով:

Եթէ երախտագէտ ազգեր իրենց Անձանօթ Զինուորին յուշարձանը դոյակերտեցին, հողեկան վշտագին թափով մը մեր ճշմարիտ նահատակներուն անձանօթ այգ շերմին պատուանդանին կը նուիրեմ հայ եկեղեցւոյ և եկեղեցականութեան պանծացումին ձըգտող բարենախանձ զգացումներու հանդանակը, սա՛ համեստ մատեանը, իբրև անթարշամ ծաղիկ, իբրև յիշատակարան կոթող մը, անոնց խնկաւէտ մարտիրոսացումը խորհրդանշանող:

Անվերապահօրէն պէտք ենք ընդունիլ թէ Հայ Առաքելական Եկեղեցւոյ, ուխտեալներու սրբազան հոյլը, ընդհանրական եկեղեցիներու համանման կղերին եւ ուխտի մարդոց կարգին, էապէս անզուգական գիրք մը գրաւած է, լուսաւորչական գահուն շուրջ:

Եւ ի՛նչ որ ալ ըլլան անհատականութիւնները, հաւաքական նպատակի մը նուիրուած մարդին մէջ, հայ եկեղեցականն է որ անձնաւորած է իր վրայ «Ժողովուրդէն ծնած, ժողովուրդին համար» նշանաբանը, բարոյական պարտականութեան պատնէշին վրայ ներկայանալով միշտ կրօնքին ու եկեղեցիին ի սպաս, իբրեւ աննկուն զինուորեալ:

Այս անխախտ համոզումը որ կը վարէ մեր բանականութիւնը, իրաւունք կուտայ մեզի կարծելու թէ մ'չ մէկ արհամարհանք ու սկեպտիկ հեգնանք պիտի չկրնան գօրել ընկճելու և տկարացնելու վառ հաւատքն ու անդիմադրելի նպատակակէտը հայ կղերին, որոնցմով տողորուած, ներկայացուցած ու պաշտպանած է ան հայ եկեղեցւոյ դարաւոր գոյութիւնը:



ՀԱՅ ԿՂԵՐԸ

Հալածական, անտուն անտէր, ցիրուցան ժողովուրդի մը ծոցէն ծնած հայ կղերը, պարտականութեան մարդը եղաւ, եւ անշահախնդիր ուխտեալներ ու անհամար վաստակաւորներ տեւական փառքը կազմեցին եկեղեցականութեան:

Նիւթական կեանքին մէջ, դիտենք թէ անլուր դոհողութիւններով ձեռք բերուած իր մը շատ աւելի արմատական արժէք մը կը ներկայացնէ, քան ինչ որ դիւրատար պայմաններու արդիւնք է:

Անկարեւոր վերագրումներ, անխորհուրդ ուժացումներ ս'չ մէկ հանգամանքներով չեն կրնար խեղաթիւրել այն հոկայական զանգուածը եկեղեցականութեան, որ խոչալական բարձր տոգորումներով փոխարինեց իրմէ ակնկալուած ամէն ազգանուէր ծառայութիւններ, իր կոչման ու պարտականութեան մարդը մնալով միշտ, կուրծք տալով նոյն իսկ անարպանքի ու կամայական խժբժանքներու և անվեհեր մաքառելով ամէն խոչընդոտներու դէմ:

Ճակատագրականօրէն հալածական հայ կղերը ուրեմն, միշտ բարձր եւ միշտ վսեմ պատուանդանի մը վրայ կը դաւանիմ, ու նշանակելի մանաւանդ անոր համար որ, նոյն ինքն տառապանքի ճամբուն վրայ և շատ համեստ պայմաններու մէջ, դիտցած է արհամարհոտ առաջխաղացումով վարել իրեն վստահուած ժողովուրդին սիրտն ու միտքը, անոր հոգեկան ու ընկերային հակումներուն հետ զուգընթաց քալելով, միշտ ժամանակակից ոգւոյն համապատասխան նկարագրով մը:

Սղճամիտ վերաքաղը անցեալ շրջաններուն կը բերէ մեզի որոշ արդիւնքի մը եւ անժխտելիօրէն

փաստացի պատմութեան մը առջեւ, ուր հայրապետներ, հոգեւոր տաղերդակներ, սրբազան հեղինակներ, օրինակելի նախանձախնդրութեամբ, բանաստեղծեր ու կազմակերպեր են, յօրինելով հայ եկեղեցին աննախընթաց ողեւորութեամբ:

Եւ ժամանակակից պատմիչներ, մինչեւ մեր օրերուն արձագանգ գտած, իրենց անսրբազրելի վաւերականութեամբ օծուն հաւաստիքներովը, կը ներբողեն հայ եկեղեցական մատենադրութեան այն ոսկեղենիկ շրջանը յորում Նարեկացիներ և Շնորհալիներ երանաշնորհ ռահվիրաներն եղան հայ կրօնական մարզին մէջ, հեթանոս միաքը վերձուլելով նորագոյն ներշնչումներով ու դրոշմելով անոր ճակտին երկնաւայ թոփէքը:

Ու հինգերորդ դարէն մինչեւ այսօր, տասնեւհինգ դարերու շղթայումով օղակաւորուած ժամանակամիջոցին մէջ, անգրգուելի նկարագիրը հայուն ո՛չ մէկ դար, ո՛չ մէկ պատմութիւն երկնած է իր ծոցէն, ներկայանալով ո՛չ միայն կրօնական դաւանանքներու, ծիսական արարողութիւններու և զուտ հոգեւորականութեան մտազբաղումներով տողորուած զանգուածային ժողովուրդ մը, այլեւ գիտակից հետեւող մը քաղաքակիրթ ազգերու օրստօրէական յառաջգիմութեանը և անոնց դպրութեանը:

Յանուն կրօնի և բարոյականի պայքարող հայ կղերն ու ժողովուրդը՝ միաժամանակ եղած են նաև դրացի ազգերու մէջ յառաջապահ ջահակիրներ միշտ աւելի բարգաւաճ, միշտ աւելի խիզախ թոփէքով, գլելով գիրենք շրջապատող այլամերժ բարքերը, ազգային նկարագրի ծափահարելի տոկունութեամբը:

Եւ յանուն տոհմային արժանապատուութեան պահպանումին եղած գոհաբերումներու ընթացքին իսկ, պատմութիւնը կ'աւանդէ նաև մեզի հայ ցեղին, հայ արիւնին այն ինքնակամ անձնուիրութիւնները,

որոնց կը պարտինք դարերէ ի վեր մեզի կտակուած այսօրուան եկեղեցիին գոյութիւնը, կորովազին վերապումներով:

Եթէ կ'ընդունինք թէ միջավայրը չազդեր նկարագրի մը վրայ — թէ նկարագիրը վեր կը մնայ զինքը շրջապատող ազդեցութիւններէն — եթէ անոնք օտար են եւ անհաղորդ, պէտք ենք ընդունիլ ուրեմն թէ, նախնական շրջաններէն մինչեւ մեր օրերուն, հաւաքական կամ առանձին և հակառակ բաղխումներու գերմարդկօրէն համբերութեամբ դիմակալող հայ միտքն ու բազուկը կրօնքին ներշնչած բարոյական պատատին վրայ, գիտցած են արտայայտել ա՛յնքան հարազատօրէն դիմագիծը իր ներշնչումներուն, իր հակումներուն և իր գաւանանքին, որոնցմով կը ներկայանայ այսօր քաղաքակիրթ ազգերու կողքին, փորձառական կատարելութեամբ:

Եւ շինարար հայը, ստեղծագործող իր ոյժերուն կրթնած, հետեւաբար դիտենք նաեւ թէ, ցաւի գալարումներուն և անիրաւ զրկանքներուն մէջ իսկ, պահեց իր կրօնքն ու գոյութիւնը, ապահովելով նաև, իր կարգին, եկեղեցին ու ազգային լեզուն պահպանող իսկ կրօնականին կեանքը:

Եւ ո՞վ ներարկեց անոր մէջ այդ սրբազան աւիւնը, եթէ ոչ մարտիրոսացած ազգի մը նշխարներուն նահատակուած մասունքները, որոնք, հաւատքով օծուն, յաւիտեանական յաղթանակի մը լաւագոյն չափանիշը եղան, տառապող հայութեան ոյժ ու կորով ներշնչող:

Եթէ հին դարը կրօնական գահակալներու հրաշագործ ներշնչումներով, իր բնածիր տաղանդներով, իր վեհափառ հեղինակներով, անզուգական մատեաններու պատուական աւանդներ կտակեր է մեզի, ժամանակակից պատմութիւնը ո՛չ նուազ գնահատելի շրջաններու արձագանդը պիտի տայ ապագայ սերունդներու:

րուն, որոնք պիտի տեսնեն թէ մայր նպատակը միշտ հաւատարիմ մնացած է, վերապրեցնելով զազափարապաշտ հայ ժողովուրդին մէջ տոհմային արդիւնաւէտ ժառանգականութիւնը :

Ու տիեզերքին չորս անկիւնները թափառող հայ ցեղին զաւակները երբ իրենց աւագ պարտականութիւնը նկատեցին աւերակներու վրայ հիմնել նո՛ր նոր Գէորգեան Զեմարաններ, Յակոբեանց ժառանգաւորացներ ու Գպրեվանքը Արմաշեան միաբանութեան, իր կարգին եւս հայ կղերը պէտք է խոստովանիլ թէ մնաց պարտականութեան մա՛րդը, ու ժամանակներու ողւոյն համաձայն ծնաւ, կերտեց նոր ոյժեր, նոր միտք, նոր ուղղութիւն, ծագեցնելով հոգեւոր ածուներու այդ սրբազան զարաստանները, հաւատարիմ աւանդապահութեամբ:

Եթէ, ըստ պատմադիրներու, հինգերորդ դարը օրրանը եղաւ հոգեւոր հեղինակներու, այժմուս դարը անուրանալի է թէ վերլուծողներ ու վարդապետողներ նուիրեց հայ կրօնական գրականութեան:

Սահակներ ու Մեսրոպներ գտան ու ձուլեցին հայ տառերը, բայց իրերայաջորդ կոչեալներ իրականացուցին ամէն ձգտում, տալով իսկատիպ գրոշմ մը «կրօնային վերլուծեալ գրականութեան» զոր լուսագոյն կերպով կրցաւ թարգմանել նաեւ ժամանակակից դպրոցը, գեղեցկօրէն արդիւնաւորելով տիպն ու տառը:

Ամէն դար իր եկեղեցական գործիչները եւ շրջանները ունեցած է. ներկայ հայ եկեղեցական շրջանը պիտի յիշատակէ նաեւ իր կարգին եւս. այժմուս եկեղեցականները որոնք ովկիաններ հետո՞ւ ճառայեցին ամէն երդիքի տակ, ամէն հայու մօտ, տաճարներէն մինչեւ տարագրի ճամբուն վրայ և մարտիրոսաբար նահատակուելով նոյն իսկ արիւնի ու թալանի գողոյթաներն ի վեր եղան գիտակից ուխտաւորներ, անձնդիր մշակներ:

Պահ մը դազըինք մեր խորհրդածութիւններէն եւ լսենք նոյն ինքն բարձրապատիւ վանահայրն ու գործադիրը՝ որ կը զրէ համանման առիթով մը, կրօնական իր ձեռնասուններուն զործունէութիւնը ակնարկելով:

— « Խղ ճամբա գործունէութեան մը ուրի կը գիտուի տանց վրայ առ հասարակ եւ իւրաքանչիւրն իր փորձառութեան չափովը իր համայնքին օգտակարապէս ծառայելու գօտեղնուցն ունի:

— « Եթէ Թերութիւններ նշմարուած են անոնց վրայ, վտառ հեք սակայն թէ, այդ ամէնը պիտի չկրնան պղտորել անոնց ներքին գիտակցութիւնը, եկեղեցականն սե՛րտ գիտակցութիւն, զոր գժբազդ պարագաներու, սրտի սեղմումներու եւ վրկումներու թոհուբոհին մէջ, պայծառ եւ անսղտա պիտի ջանան պահել միշտ:

— « Ո՛վ է որ, նախանձանդիւր ըլլալով արգային կըրթութեանն ու մշակումին, պիտի համարձակի իբրեւ «մակաբոյժ» արհամարհել հայ եկեղեցականին շնորհազեղ աճումը մեր կեանսակի ճիւղին վրայ:

— « Զենք հարցներ թէ երբէն ի վեր գաղթած են իրենց հայրերուն արհուականութեան պատիւ բերելէ, ժողովրդատէր, լուսամբա, պարկեշտ ու գործունեայ եկեղեցականներ:»

Մասնաւորաբար մեզի, թրքահայերուս համար գէտ շատ թարմ է մտքերու մէջ յիշատակը և այն խանդավառ ընդունելութիւնը որ ծայր տուաւ անխախր բոլոր Արմաշեաններու երեւումովը, որոնք եկան նոր շրջան մը վերապրեցնել մեր մէջ, երջանկայիշատակ Խրիմեաններու, Մուրատեաններու, Սրուանձատեանցներու կիրարկած կրօնադրականթ ուսկաններէն վերջ, մշակելով եկեցեց. գրականութիւնը, քարոզելով, մեկնելով, թարգմանելով ի մաստասիրական վարդապետութեամբ մը, իբրեւ բաց մատեանները իրենց «ուսուցչակախն»:

Ու մտերմիկ միջնուորտ մը թափ տուած օրստօրէական յարաբերութիւններու, գրագէտ, գրասէր բա-

րեկրօնն ու հաւատացեալը եռուզեռ կեանքը կ'ապ-
րէին, կրօնական հանդէսներէ, հոգեւոր պարբերական-
ներէ ու սրբավայրերու թովիչ գմբէթներուն տակ վա-
յելելով գիրենք, ինքնակամ զոհունակութեամբ:

Կրնանք խոստովանիլ ուրեմն թէ համանման
նպատակակէտ մը որդեգրող ո ե է միջավայր պիտի
չկրնար երբեք տարբեր հայեցակէտ մը մարմնացնել
իրմով և իրեններով, որքան ըրին Գպրեվանքեանները,
նոյն իսկ շատ սեղմ պայմաններու տակ եկեղեցւոյ
արդիական կազմը ներկայացնելով աւանդապահօրէն:

Եթէ երբեք զոնուեցաւ իրենց մէջ ներթափ խմ-
բումներ, եկան դարբնուիլ սակայն անոնք հաւաքա-
կան միակ նպատակի մը շուրջ, գաղափարական ի-
տէալ ուղղութիւններով ծառայելով ազգին:

Սկներեւ է ուրեմն թէ, երբ կզերն ու ժողովուրդը
գաղափարական եղբայրացումով կը մօտենան իրարու,
երբ քօղարկումներ չկան վարդապետութեանց մէջ
և ճշմարիտ ճանաչողութիւնն է որ կը տիրէ փո-
խադարձաբար, այլեւս մեռեալ խօսքեր կը մնան այն
ամէն ծրագիրները վերանորոգութեան, որոնք կը մտա-
հոգեն մեզ այսօր առաջքը աննկու համար շեշտուած
ուծայումներու և պատուարելու համար կրօնամերժ
նգումները:

Դարավերջիկ արդիականութեամբ, երբ մարդկա-
յին միտքը մտածումներու յեղաշրջումը կըզգայ իր
մէջ, բնականաբար շատ անմիջական կը դարձնէ եկե-
ղեցւոյ բարեփոխութեան հարցը, շեշտելով կարեւո-
րութիւնը անոր կատարելիք դերին, որ թէեւ առաջին
առթիւ մտահոգիչ, բայց երբ վերլուծենք պայմաններն
ու միջոցները, դիւրաւ կարելի պիտի ըլլայ հասնիլ
հաւանական արդիւնքի մը:

Հետեւաբար, արդի պայմաններու մէջ, դարմա-
նումի անյետաձգելի միջոցներէն մին՝ պէտք կըզ-
գանք շեշտելու, այն միակ ուղղութիւնն է, որով նախ

Յայ եկեղեցականութիւնը պէտք է պատրաստել նոր եւ նպատակալարմար կազմակերպութեամբ :

Քրիստոնէական վարդապետութեանց կատարելութիւնը պատգամող մեր հայ եկեղեցին ամէն իրաւունք ունի դարեր ևս շարունակ ապրելու, եւ որքան ատեն որ լրջախոհ ուսումնասիրութեանց անսպասողբար մըն է ան, պիտի գրաւէ ո և է տրամաբանող միտք:

Եւ հայ եկեղեցին կոչուած է լաւագոյն շրջաններ վայելելու, ներկայացնելով կորիզը բարձր բարոյականի մը:

Այսքան սրբազան տուեալներով կառուցուած կրօնքի մը պաշտօնեան ամենակենսական ազգակն է ուրեմն տեւականացնելու համար անոր ներշնչած հմայքն ու լրջութիւնը, պահպանելով հայ եկեղեցւոյ դարաւոր վեհութիւնը:



ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՒՆ

Կ'արժէ ուրեմն արտայայտուիլ մ'եր այսօրուան կրօնական պաշտօնեաներուն դասաւորումներուն մասին և տեսնել թէ ի՞նչ հանգամանքներու տակ կը ներկայացնեն անոնք իրենց կատարելիք զերբ:

Հայ եկեղեցին, ինչպէս անցեալին մէջ, այսօր ալ կ'ընդունինք թէ պէտք ունի իր կազմակերպութիւնը ղեկավարող հեղինակաւոր եկեղեցականներու, զայն ներդաշնակութեան մէջ պահող վեղարաւոր վարիչներու, բայց նոյնքան ալ արամաբանական է որ, վերցնենք այլեւս այն անհասկնալի խտրականութեան ոգին, որ վտանգած է մեր կրօնի պաշտօնէութեան մարդին մէջ այն միւս դասակարգը, քահանայութիւնը, որուն գրաւած ու ապրած դիրքը շատ քաջալերական վիճակ մը հունի այսօր:

Եւ մեր հայ եկեղեցականութեան շարքերուն մէջ դասակարգային շերտաւորումները շատ տկար կերպով ըմբռնուած ըլլալով ժողովուրդին կողմէն, շատ ալ հասկանալի է որ քահանայութիւնը, օրսօրէ տկարանալով, չէ կրցած պատուց տեղ մը գրաւել պահանջուած չափով ու խոստմնալից ասպարէզ մը նկատուիլ:

Ու որքան ատեն որ մեղադրելի վերապահումներ քաջալերութիւն գտնեն, քահանայական ասպարէզը պիտի չկրնայ բարձրանալ, մնալով մի՛շտ լճացած ու յետադէմ՝ «գործակատար-ծխարար»ներու անհրապոյր մակարդակի մը վրայ:

Բայց ինչո՞ւ և մինչեւ ե՞րբ այս արհամարհող վերաբերումը «քահանայագործողներու» նկատմամբ:

Փորձառական քննութեան մը բովէն անցնենք պահ մը տիրող հոգեբանութիւնը, ժողովրդային ամէն խաւերուն մէջ, ուր անկարելի պիտի չըլլայ նշմա-

րել այն թագուն արհամարանքը, որ, ինչպէս ըսինքս, փաստաբեր հանգամանք մը առած է զգալի համեմատութեամբ, կրօնականներու այդ դասակարգին հանդէպ:

Չա՞րժեր ուրեմն սրբազրել այդ սխալ մտայնութիւնները հիմնական դարմանումներով, երբ կը տեսնուի թէ ժողովուրդին մօտ անմիջական հազարդակցութեան մէջ ապրողը աւելի լայն չափով մը քահանա՛ն է, որ կողք կողքի կը քալէ անոր հետ քան վեղարաւորը, որ շատ անգամ հազիւ քանի մը ժամուան կեանք ունի ուկնդիր բազմութեան մը մօտ, չէզոքացուած շրջանակի մը մէջ, իր քարոզչական պաշտօնին կիրարկումէն անմիջապէս յետոյ:

Յայտնի եկեղեցականի մը շահեկան մէկ տեսութիւնը նպատակայարմար կը գտնեմ մէջբերել հոս, այս առթիւ յայտնուած կարծիքի մը կարեւորութեամբը, ընդօրինակելով զայն.

— « Լուսաւոյնին տիրանալու տեսչը Գպրեվանք մը երկնեց ու ծնուա: Այդ նորածին Հաստատութիւնը քաղաքական շատ աննպաստ պայմաններու ներքեւ կրցաւ իր գոյութիւնը պահել եւ շեշտակի դիմել իր որոշ նպատակին, բայց շատ բնական հարցում մը ունինք թէ, ուսեալ եւ զարգացեալ կուսակրօն եկեղեցականներ ունենալու իրական պէտքը կշռող, զգացող Հոտարակութիւնը կամ անոր պաշտօնական ներկայացուցիչները ինչո՞ւ միեւնոյն նախանձախոյզութիւնը ցոյց չեն տար ամուսնացեալ եկեղեցականութեան, քանիանայութեան վերաբերմամբ:

— « Կարելի չէ խորապէս չցուել Հայ եկեղեցւոյ պաշտօնութեան ներկայ կողմին մէջ ամենէն աւելի անտեսուած եւ իր բազմին թողուած քանիանայութեան վրայ, որ իր պաշտօնին բնութեամբը, մեր եկեղեցւոյ նուիրապետութեան մէջ, ունի իր աւանձնայատուկ տեղը:

— « Անիկա է ժողովուրդին մօտ ապրողը, անոր խորհրդատուն, բազմակիցը, վիճակակիցը, աւաջնորդը տան, երէցը եւ տէր հայրը: Եկեղեցւոյ եւ ժողովուրդին գործնական կեանքին հետ այսքան մօտէն շփում ու սերտ աղերս ունեցող

քանիանայումբեան նիւթապէս ու մ'աւարտական աննախանձելի վիճակը եւ բարեոքութի համար ցոյց տրուած անտարբերութիւնը, ուշ կամ կանուխ եկեղեցին ամալութեան եւ ժողովուրդն ալ բարսյական անանկութեան պիտի դատապարտեն:

— « Այլեւս պէտք է վերջ մը տալ ներկայ անգոհոյսուցիչ դրութեան շարունակութեանը, օր մը եկեղեցին ու իր հօսը չտրագուշտի տխուր իրողութիւններու տկանատես չընելու համար:

— « Եւ հարկ անհրաժեշտ է եկեղեցին օժտել իրենց պաշտօնին գիտակցութիւնը եւ ծանրութիւնը քաջ ըմբռնող քանիանանկրով, որպէս զի կրօնքը ու բոլոր նուիրակները ինչնորը ծաղրանքի աւարկայ ըլլալէ դուրսին, ներկայ սկեպտիկ դարուն մէջ: »



Կրօնքն ու եկեղեցին յարդող հայութիւնը ուրեմն անհրաժեշտ է որ տիրաբար պահանջէ նախ եւ առաջ իր դարաւոր եկեղեցիին վերանորոգման դարմանը ու սրբապրէ զայն իր հիմնական գծերուն մէջ, քան թէ ծիսական կարգ մը կրճատումներուն պէտքէն տարուի, որոնք աւելի կամ նուազ չափով չեն կրնար երբեք ժողովուրդը իր եկեղեցւոյն հետ հաշտեցնելու ոյժ մը ապահովել, չներկայացնելով անհրաժեշտ արժէք մը եկեղեցական բարենորոգումներու հարցին շուրջ:

Հայ կղերը իր հոգեւորական դիրքին բարձրութեան վրայ ոչ մէկ կերպով չկրնար հմայաթափուել, որքան ալ եկեղեցական աստիճաններ աւելի կամ պակաս արժեցումներով որակած ըլլան զայն, ամուսնացեալ թէ կուտակրօն, վեղարաւոր կամ անվեղար:

Իրենց կոչման դիտակից եւ հաւատարմօրէն եկեղեցական ասպարէզը բարձր պահող արժանաւոր քահանայութիւնը քաջալերելով եւ անոնց դիրքին վայել եկեղեցական աստիճաններու բարձրացման դադափարին ազատախօս հեռատեսութեամբ, բերկրառիթ

է արգարեւ որ դրականօրէն ստորագրուի այլեւս, իբրեւ արգիական պահանջումներու համապատասխան, կարգադրութիւն մը:

Եւ երբ մէկ կողմէն կը ձգտինք հիմնական բարեկարգութիւններ ներմուծել, տեւականապէս բարձրացնելու համար հայ եկեղեցւոյ դիրքը, քաջալերական պիտի նկատենք տեսնելով նաեւ որ հայ եկեղեցւոյ կազմին բարոյական նեցուկներէն մին հանդիսացող իսայ բանիւնայութիւնն եւս որոշ միջոցներով օժտելու կամեցողութիւն մը ցոյց տրուի այլեւս, անխըտրական ոգւով մը իրենցմէ արժանաւորները նոյն իսկ բարձրագոյն աստիճաններու վրայ դնելով:

Ի՞նչ փոյթ թէ գիտութիւնը յառաջդիմեր է, թէ մարդիկ հիասթափումներ ունին բնութեանական յայտնութիւններով, թէ զգացումները նիւթականացած են, թէ դրական աշխարհը յեղաշրջած է այլեւս. տիրող բանականութիւնները եւ մարդկային դատողութիւնները:

Անխուսափելիօրէն պէտք ենք համոզուիլ թէ կրօնական բարձրութիւնը դէպի հո՛ն պիտի գահակալէ միայն, ուր մարդկային միտքը պիտի չկրնայ յենակէտ մը գտնել, ո՛չ իր փիլիսոփայական վերլուծումներովը, ո՛չ իր իմաստասիրական քննութիւններովը եւ ո՛չ ալ իր հեռաբիտակներուն ոյժովը խորաշփելով անեղրութիւնը:

Երբ բժիշկը իր ճարտար մասներուն տակ շոգացող նշգրահին հարուածը կուտայ թարախացած պալարին, անոր սպիացումը ազերսող պարտականութեան ձայնն է որ կըզգայ ներսիդին ու ճշմաժամային այդ պահուն, իր բովանդակ ոյժն ու ճիւղը այլեւս ապագային է որ նուիրուած կ'ըլլայ:

Հիւանդը պէտք է բժշկել, ապահովելով անոր կեանքը, անոր ապագայ կեանքը, նոյնինքն կեանքը՝ իր շուրջիներուն, ապագան՝ միւսներուն տեւական գոյութեանը:

Եկեղեցականը ուրեմն գիտակից մասնագէտն է եւ իր դերին մարդը, որ կոչուած է ծառայելու վաղուան համար:

Ու այդ վաղը պէտք է որ մտահոգէ մեզի այժմէն, մեր այսօրուան ոյժերուն, միջոցներուն ու կարողութեանը բովանդակ նուիրումովը:

Ըսուած է թէ մեծ ազգերը անոնք են, որոնք անկախ են եւ ուժով: Ընդունինք ուրեմն թէ հայ եկեղեցականը պիտի ապահովէ իր ապագայ դոյութիւնը, այն պայմաններով որ ժողովրդային բարոյական վերաբերումը ջանայ արդիւնաւորել եւ իր կարեւորութեամբը արժեցնել դայն, երբեք չվտանգելով փոխադարձ հաւատքն ու վստահութիւնը:

Ու այն ատենն է որ կրօնք ու բարոյական նոյնացած, յաւիտենական հովանիները պիտի ըլլան յաջորդական սերունդներու վրայ թեւածող հրեշտակներու պէս, հաւատքով եւ գիտութեամբ զինուած մականի մը տակ:

Կրօնքով պարծող և ազգային աւանդութիւններով անած ու տոհմային պատուախնդրութեամբ քալող ազգ մը թող չչրկնի երբե՛ք, որքան ալ հեզնեն զինքը թէ խունկի ու մումի միամիտ ժողովուրդ մը ապրած է:

Պատմութիւնը պիտի ըսէ ապագայ սերունդներուն թէ հայ ազգին խանձարուրը նախ կրօնքին երկունքը պարփակեց իր մէջ:



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Կայ սակայն տարբեր տեսակէտ մը որ պէտք չէ աննշմար անցնի, երբ պէտքը կը զգանք սերտ հաղորդակցութեան մը եկեղեցւոյ և ժողովուրդին միջեւ, իբրեւ ներդաշնակութեան և հասկացողութեան կենսական պայման:

Յաջորդական հալածանքներէ թէեւ ուժասպառ, բայց միշտ ստիպողական պէտքի մը առջեւ կը գրտնուին եկեղեցի ու ժողովուրդ՝ վերակազմուելու անհրաժեշտութեան տակ, զօրեղ կամքով ու իրենց դարտոր համբաւին վայել տողունութեամբ:

Այն անխորտակելի նկարագիրը Հայուն որ մահուան և յարութեան խաղը կը խաղայ կարծես անվհատ պայքարումներով, ազգերու պատմութեան բեմին վրայ, քաջաբար մեռնելով ու միշտ յաղթական ու միշտ կորովի, իրաւունք ունի ապրելու:

Ազգ մը որ կը տառապի բայց կը յուսայ, ազգ մը որ ապտակին կը փոխադարձէ ներողամտութեան կրօնական ուղով, իրաւունք ունի յարգուելու:

Եւ հայ եկեղեցականը, խաղաղութեան այդ հոգեւոր պատգամաբերը, շատ խոհուն գիտակցութեամբ պէտք է լծուի տեւականացման հարցին, նկատի ունենալով պատասխանատու իր դերին բովանդակ լըրջութիւնը:

Եթէ մեր նախնիք, օժտեցին իրենց ժամանակակից դարերը կրօնական թանկարժէք գրականութեամբ ու երգեցին եկեղեցին, կրօնքին վեհափառ բանաստեղծութիւններով, մենք, արդիականներս, պէտք ունինք վերակազմութեան և բարեփոխումի մեքենականութեանը շարժիչ ոյժերուն, երգէն զործի անցնելու և դրականացած այժմէութիւններու կտրուկ կերպով դիմակալելու համար:

Ու այս որոշ ուղղութեան համապատասխան արդիւնքներ պիտի կրնանք ձեռք բերել, իսկապէս ու գիտակցութիւն անձնաւորող եկեղեցականներու համամիտ գործակցութեամբը միայն:

Բայց թէ պիտի կրնանք գործակցիլ անվերապահ անկեղծութեամբ ու կորովով:

Ոչ միայն ծրագիրներու, այլեւ անշահախնդիր ու բարի արամադրութեանց պէտքը նոյնքան կենսական կը դառնայ ազգային դոյութեան մը ապագան տեւականացնելու պահանջքին շուրջը:

Պէտք է խոստովանիլ թէ ժողովուրդին վերաբերումը դէպի իր կղերն ու եկեղեցին շատ տկարացած է այնպիսի ատեն մը, երբ փոխադարձ զալափարակցութիւն մը անհրաժեշտ պայմանն էր հիմնուելիք բարենորոգումներու դեռիւնը ապահովելու համար:

Նկատելի է նաև կղերին ու ժողովուրդին մակերեսային, այն տեսակ մը անբաւական յարաբերութիւնը և սրտակցութիւնը, տեսակ մը խուլ անհաղորդակցութիւնը և մտերմութիւնը, որ կարծես թէ հակամէտ է օրստօրէական ձգտումի:

Եւ զարմանալի է նաև որ, քաղաքակիրթ ազգի մը լաւագոյն ձիրքերովը օժտուած մեր բազմադիմի հանգամանքներուն մէջ, երբե՛ք չենք ուզեր անդրադառնալ թէ, մեր եկեղեցին դէպի քայքայում տանող դրդապատճառներէն ամենէն ուշագրաւն է նաև այն անլուծելի անտարբերութիւնը, որ դէպի մեր սրբավայրերը ցոյց կը արուին և կը չէզոքացնեն նամանակահատիկ եկեղեցականութեան յետխնակութիւնը:

Եթէ իրօք սրտանց կը պաշտպանենք մեր կրօնքն ու եկեղեցին, պէտք ենք ապացուցանել թէ գիտակից ազգ մըն ենք, թէ տէրն ենք մեր բարոյական և ընտանեկան սրբութիւններուն, թէ գիտենք պայքարիլ չարին դէմ, թէ չենք սակարկեր, չենք ստրկանար, չենք դաւեր, չենք անիրաւեր, չենք անպատուեր:

Որքան ալ գիտութիւնը գերադաս մակարդակի մը վրայ ցոյց տայ իր հրաշալիքները ապշող նախուածքներու տակ, որքան ալ կեանքի փորձառութիւններու եւ ընկերային դպրոցը մեզի սորվեցնեն թէ նիւթը նոր դարուս աստուածները կը կերտէ, գաղափարապաշտ միտքը սակայն անվրէպ պիտի ընդվզի այդ վարդապետութեանց հանդէպ, ու պիտի երթայ օթեւանիլ իր նախասիրած ոլորտներուն մէջ, ուր հոգեբանը իր յագուրդը պիտի գտնէ, միմիայն գերազոյն հմայքներու տակ իր ներշնչումները փնտռելով հոն:

Եւ ահա այն միակ իտէալական ձգտումն է որ, կորովագին անձնապատանութեամբ ու հաւատքով օծուն, վերամբարձ պիտի թափօրէ գաղափարապաշտ եկեղեցին, որքան ալ մացառոտ ըլլան բարձունքներու արահեանքերը:

Վերապրող յայտնի եկեղեցական մը գրական գեղեցիկ վերլուծումով մը կ'արտայայտուի նոյնիմաստ խորհրդածութեան մը շուրջը, ուրկէ կ'արտատպենք կարեւոր տողերը. —

« Հայ ինքնութիւնը իր եկեղեցիով կ'արտայայտուի, հայ Հանճարը իր ազնուագոյն տարրերը ի սպաս դրած է եկեղեցիին: Հոն կը գտնենք հայ արուեստին լաւագոյն մոտիւները: Հայ քնարը անոր ներշնչումներուն կը պարտի իր վսեմ թռիչքները: Հայ դրսիկանութեան էն բուրմիտէտ եւ երկներանգ ծաղիկները անոր ինկաբոյր մ'թնուորտին մէջ ուճացած են: Հայ կեանքին սիրտը եղած է ա՛ն, կեդրոնը հայ քաղաքակրթութեան եւ համագրութիւնը իր բուրբ բարձր արտայայտութեանց:

« Եկեղեցին գերազանց նշանակութիւն մը ունեցած է հայ քաղաքակրթութեան համար: Հայ ժողովուրդը նախաքրիստոնէական շրջանին իր քաղաքական փայլուն օրերուն իսկ, ազգային եւ բարձր բարոյական գիտակցութեան մը չէր հասած: Ո՛չ կրօնքի, արուեստի եւ մտածութեան ինքնատիպ ստեղծագործութիւններ կը փառապարզէին իր պտտմութիւնը, ո՛չ հայրենիքի գաղափարը եւ նոր խտէալներ կը խոնգալուէին ղինքը լաւագոյն ապագայի մը համար:

« Արդէն իր աշխարհագրական դիրքը, իր ընկերային կազմը, իր վարչական կեդրոնախոյս դրութիւնը կը դժուարացնէին ամէն բնականոն ղարդացում: »

« Աւետարանին մանանելը սակայն գեղեցիկ ու հրաշալի փթթումներ ունեցող հայկական բեղուն դաշտին մէջ: »

« Հայ ժողովուրդը, քրիստոնէական դաստիարակութեամբ, նոր ձուլում եւ կազմաւորութիւն ստացաւ: Ան բարձր նպատակի մը պատրաստուեցաւ եւ վսեմ անձնազոյժութեամբ կրեց իր կոչումին խաչը, որ սարկներով արիւնեց իր ցաւատանջ կուրծքը, Լուսոյ ճաճանչներով ստակեւոյթ իր մարտիրոսի գլուխը: »

« Այնուհետեւ նոր գաղտփարներ, նոր տենչանքներ, նոր երազներ ոգեւորեցին իր Լճացած կեանքը եւ կրօնական ու բարոյական նոր արժէքներ դրուեցան իր գիտակցութեան առջեւ: »

« Ի՞նչ է սակայն իր դերը ներկայիս եւ ապագային մէջ: Հայ եկեղեցին կղզիացած եւ անհաղորդ մտքին մը ելած չէ՝ մեր կեանքին մէջ եւ ոչ ալ իր պաշտօնէութիւնը մոլեւանդ եւ ցեղին կենսահիւթը ծծող մակաբոյժ մը: Ընդհակառակը ժողովրդավար նկարագիր մը ունի՝ եւ ժողովուրդէն կը բղխի իր պաշտօնէութիւնը: »

« Ուստի հրամայական պահանջը մը կայ որ եկեղեցին վերակենդանանայ եւ նորագուի, ընդ առաջ երթալու համար այն վտանգներուն որ կըսպառնան իր գոյութեանը: Եւ իբրեւ առաջին պայման այս փրկարար բարեշրջման, բարձրացումն է իր պաշտօնեաներուն որ կոչուած են մեծագոյն դերը կատարելու: »

« Մեր նոր սերունդը կը մեծնայ առանց կրօնի բաւարար ուսման: Աւետարանի ներշնչումները կարեւոր տեղ մը չեն գրաւեր տղոց սրտին մէջ: Ներհուն եւ հաւատացեալ եկեղեցականներու պէտք ունինք, բարձր ներշնչումներ թեւադրելու համար նորահաս սերունդին: »

« Հայ քաջանալութիւնը որ մեծ դիւրութիւններ ունի ճանչնալու ընտանեկան կեանքի ներքին դրուագները, ընդհանրապէս չէ պատրաստուած իր կոչումին: »

« Անոր, քաջանային, կը պակսի դիտութիւնը եւ պարտաճանաչութիւնը: Զարգացեալ հայ քաջանաներ մեր ընտանեկան-ընկերական նկարագիրը եւ կեանքը բարձրացնելու կոչումն ունին: Հարկ է դնել զանոնք այնպիսի բարձրութեան մը վրայ որ կարենան ծառայել Աստուծոյ թագաւորութեան: »

ԿՐՕՆԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԸ

Եւ սակայն, միշտ համաձայն մնալով եղած բոլոր անուրանալի քննադատութեանց, չեմ կրնար հաւատալ թէ արդարեւ ղէպի անտարբերութիւն, կամ ղէպի ուժացում կը միտինք մեր կրօնաբարոյական կեանքէն:

Զպիտի կրնամ ընդունիլ եւ հաւանիլ նաև թէ հայ եկեղեցւոյ կազմը, որ մեր բովանդակ արտայայտութիւնները կը խտացնէ իր մէջ, օրըստօրէ ղէպի որոշակի անկում կը դիմէ:

Այլապէս անխորհուրդ և տկար համոզում մը որդեգրել պիտի ըլլար, երբ տկարանայինք այս երեւոյթին առջեւ:

Բայց ի՞նչ են ուրեմն այն թաքուն պատճառները, որոնք եթէ երբեք կը դատարկացնեն մեր սրբազան տաճարները, անդին սակայն, անհամար ու միահողոյն վազքի մը առջեւ, անբաւական կուզան հանրային հաւաքավայրերու սրահները ու շա՛տ նեղ, անոնց լայնաբաց դռները:

Եթէ այլեւս ախորժ չեն թուիր ըլլար ալեյուններն ու օրհներգները, անդին սակայն նոր թափ մը առած է նուազն ու երգը:

Նոր նոր աստղեր կը փայլին թատերասրահներու բեմին վրայ, նոր երկարասիրութիւններ անթիւ անհամար տարտղնուած են գրադարաններու, գգրոցներու, դպրոցներու եւ ընթերցասրահներու մէջ:

Ու ամէն մարդիկ ամէն սեռէ, ամէն տարիքէ, նոր տաճարներու, նոր մտամարզարաններու կը դիմեն հեւ ի հեւ, հետաքրքիր վազքով մը:

Ի՞նչ բանի վերագրել ուրեմն այս նշանակալից երեւոյթը...:

Կը դիտուի ուրեմն Թէ մարդկուծիւնը այլասե-
ռած կամ վատասեռած չէ երբեք :

Անիկա ձգտումն ունի իտէալ վերացումներու,
մեռած չէ անոր մէջ բարձրին գաղափարականը: Զար-
գացման ոյժին եռանդովը մտրակուած կը սուրայ ան
դէպի իտէալ կատարելութիւնը:

Յունն թափով մը հետաքրքրուած է զրական բա-
նաստեղծութեամբ: Զմայլումով կը դիտէ երկնքին
կապոյտը ու փառասեղ գիշերուան աստեղազարդ կա-
մարը: Սանդազառութեամբ տարուած է հանճարներու
տաղերգանքէն ու վեմ հոգիի մը ներշնչումները կը
սիրէ կարգալ ստեղծագործ զգացումներու թրթռա-
ցումէն:

Գերազանցօրէն դիւթուած է երաժշտութեան մը
ներդաշնակութիւններէն ու բնութեան անհունապէս
հարուստ զրուագիներէն կը սնանի իր բարձրաթիիչ
հոգին:

Ու մարդկութիւնը, իբրեւ գանգուածային համա-
դրութիւն մը, նորաստեղծ խորաններ կը կերտէ իր
նոր աստուածները փառաբանելու համար հո՛ն, խան-
գավառութեամբ ու ինքնամոռաց յափշտակութեամբ:

Եթէ իրաւ է որ կրօնքի բեմը ճշմարտութեան եւ
յաւիտենական խորհուրդին նիւթը ունեցաւ իր շքրթ-
ներուն վրայ դարերէ ի վեր, տկարացա՞ւ արդեօք ա-
նոր խանդավառող շունչը մեր օրերուն մէջ:

Արդարեւ, գեղեցկութիւններ շպարի մը կը կարօ-
տին միշտ, որքան ալ օժտուած ըլլայ ենթական
բնատուր շնորհներով:

Թէեւ փոփոխութեան կամ պճնանքի ո՛ր և է փորձ
պիտի խաթարէր եկեղեցւոյ երկնային օձութիւնը, պի-
տի խախտէր սրբութեան մը անսեթեւեթ վեհութիւնը,
բայց պէտք է շպարել զայն, անոր արժէքն ու պար-
զութիւնը պահելով միշտ, շատ աւելի մտերմիկ եւ
աւելի հետաքրքրական, աւելի սիրելի, աւելի պաշ-

տելի պահելով ու դարձնելով զայն առանց զեղծանելու անոր իսկական հմայքը:

Անկեղծ ըլլանք, խոստովանելու համար ուրեմն թէ ս՞րբան խնամք տարուած է, օրինակի համար, մեր եկեղեցական երաժշտութեան և թէ ս՞րբան արդիւնաւոր եղած է հայ եկեղեցւոյ քարոզչական բեմը:

Միջանկեալ կերպով մատնանշելով հայ եկեղեցւոյ երաժշտութեան տիրող վիճակը, կրնանք որոշապէս հաստատել թէ, զեռ նոյն իսկ մեր օրերուն, հայ եկեղեցական երաժշտութիւնը ս'չ մէկ հնաւանդ դրոշմ կը կրէ իր վրայ:

Ամէն ժամանակի ու ամէն շրջաններու մէջ միշտ փոփոխութեանց ենթարկուած, զեռ չենք կրցած որոշ ու միաձեւ ուղղութիւն մը և հարազատ նմանութիւն մը տալ անոր ամբողջական կազմին:

Ու կարծես, յամառօրէն, անհատականութիւններու քմածին խաղերուն ենթակայ, նոյն իսկ ամենամօտաւոր թաղերու կամ արուարձաններու մէջ, մէկ եկեղեցիէն միւսը, տարօրինակ ձեւափոխումներ կը նշմարուին, ոչ միայն հոգեհմայ շարականներու այլ և պատարազի ամենապարզ երգեցողութեանց մէջ:

Եւ իբրեւ թէ տիրող միակ եկեղեցիի մը երգեցողութիւնները ամենուն համար առհասարակ պարտաւորիչ չըլլային, շեշտակի ձեւափոխումներու եւ քմածին ազաւազումներու կը հանդիպինք մէկ քայլէն միւսը, օտարոտի նկարագիր մը գտնելով մայր երգերու հարազատ սրբութիւններուն մէջ:

Ու հակառակ յաճախակի դիտողութեանց, ցաւալի է որ զեռ ս'չ մէկ հրամայական օրէնք մը չկրցաւ իր ձայնն ու ոյժը պարտադրել, հայ եկեղեցւոյ հոգեզմայլ երաժշտութիւնները օժտելու համար միաձեւ ու հիմնական նօթադրութեամբ մը:

Չարմանալի մտայնութիւն և ցաւալի զանցառութիւն մըն է այս պարագան, նոյնքան փտանգաւոր:

Իսկ հայ եկեղեցւոյ բեմը հազիւ կը համրէ իր պերճաբան քարոզիչներուն հազուադիւս բացասութիւնները, որոնք տիրական ազդեցութիւն պահած ըլլան՝ իրենց գրաւիչ տաղանդներէն մազնիսացնելով հետաքրքիր ուկնդիրներ:

Արմաշեան յայտնի դէմք մը, մատնանշելով հայ եկեղեցւոյ բեմը, խորհրդածութեանց նիւթ կ'ընէ զայն հետեւեալ մտահոգութեամբ ներկայացնելով իրականութիւնը. —

« Հայ եկեղեցիի դուստիներուն կրօնախօսական վիճակին վրայ ժամանակէ մը ի վեր տխուր երեւոյթ մը կը տեսնուի: Երկեւ չտատացեալներու մէկ մասը իր լուսամտութեան կարգը կը դասէ նսեւ անտարբերութիւնը դէպի իր մայրենի եկեղեցին:

« Հայրենաւանդ ջերմեւանդութիւնը հեռոյհեռէ կը պակսի անոնց մէջ, կրօնական պարտականութեանց մէջ կը թերանան, եկեղեցի չեն յաճախեր, հոգիի անդիմադրելի պէտքը չեն գոհացներ: Կը խորհնք թէ, առանց ժխտելու եկեղեցիի շինիչ դերը, գործնականացնելու մասին եկեղ. ընդհ. ժողովին լիակատար իրաւասութիւնը, անկարելի չէ որ կրօնական գործերու իրաւասու մարմին մը գտնէ եկեղեցւոյ բեմը արգիւնաւորէ եւ արժեցնէ, քանի որ անուրանալի է կենդանի խօսքին, քարոզին ճիւղնալի արգիւնքը:

« Լոկ ծիսակատարութեան համար հոգեւոր պաշտօնեայի մը ներկայութիւնը անհրաժեշտ կը դատուի ամենուրեք սակայն բեմին կենդանութեան, միտքերու լուսաւորութեան եւ հոգիներու զարթնումին համար, աւելի կարեւորութիւն մը տրուած է: Ինչն՞ է բեմը աւելորդ պերճանք մը կամ հանդիսաւորութիւն մը նկատուելու վրայ է եւ ալ ինչ կայ զարմանալու եթէ եկեղեցիին մէջ լսուածին ու տեսածին վրայ չլուսաբանուած բանաւոր հօտ մը կ'ուծանայ իր պապեանական հաւատքէն:

« Գուցէ առարկուի թէ այսօր իրապէս կա՞յ մեր եկեղեցիին մէջ բնւ՞ ըսուածը. ճիշտ է, բաւական խորհիւ պէտք է կարծես, հասաստական պատասխան մը կարենալ տալու համար:

«Արդարեւ բե՛մն որ չունի պարզ, յստուկ եւ հասկնալի
լեզու, չի մօտենար գաղտնիքներու նորութեան եւ չ'ար-
դարացներ ժամանակակից իմացական զարգացումը, չի թելա-
դրեր կրօնաբարոյական աւուղջ սկզբունքներ, այս դարուն
մէջ գոյութեան իրաւունք իսկ չ'ունի:

«Շատ քիչեր թերեւս ծիսական արարողութիւններէ
գրաւուն, իրենց աչքերով կամ ականջներով ստի, բայց
հօտն, իր մեծամասնութիւնովը, անկասկած կը ներշնչուի
յանկուցիչ բեմին հոգեշունչ արտայայտութիւններէն, կեն-
դանի խօսքին մատակարարած հոգեկան սնունդէն, պայմա-
նաւ որ չէ թէ հասնողը, այլ կարողը միայն բեմ բար-
ձրացուի:»

ՀՈԳԵԻՈՐ ԱՍՊԱՐԷԶ

Անկարելի է նաև Հանդրադատնալ ուրիշ շատ աւելի կենսական տեսակէտի մը, որ տարբեր հանգամանքներով հայ կրօնաւորին փաստելու բնոյթն ունի, անոր բարոյական հմայքը տկարացնելով:

Կրօնական ասպարէզը խեղաթիւրուած է՝ աշխարհիկ կեանքին ու է մէկ ասպարէզին վրայ յետամնաց անժառանգներու իբրև ապրուստի միջոց նկատուելով:

Չենք գիտեր թէ բարոյական ծանր պատասխանատուութեան տակ չէի՞նք մնար, կամ մեր իսկ լրջութիւնը հեղնած չէի՞նք նկատուեր, երբ «բազմազուրկներու ասպարէզ» որակումով պիտակէինք կրօնքի ու եկեղեցւոյ այդ հոգեւոր նուիրեալները:

Կա՞յ արդէօք նիւթական ապրուստի ու է միջոց կամ ասպարէզ, որ իր վարձատրութեան բաժինը բերէր այնքան ժլատ ու անհամեմատական որպիսին են մեր հայ եկեղեցականներուն նիւթական ապահովութեան վտիտ միջոցները:

Ի՞նչքան բարձրատիճան եպիսկոպոսներ, ի՞նչ արժանայարգ վարդապետներ և ի՞նչ պատուական քահանաներ կրնանք մատնանշել (տարիներու փորձառութեամբ և անձնական սերտ ծանօթութեամբ) որոնք, իրենց վրայ ծանրացող պարտականութեան հետ, կեանքի հարցը — մտազբաղեցնող դամոկլեան սուրը — տարեր են ու կը տանին իրենց գլխուն վրայ:

Հազուադիւտ բացառութիւնները օրէնք մը չեն կազմեր և ոչ ալ մեր ակնարկած հանգամանքներուն հակառակը ապացուցանող փաստ:

Համեմատաբար, եթէ երբեք աւելի կամ նուազ բարեկեցիկներ ցոյց տրուին մեզի, ես ատիկա պիտի վերագրէի անոնց ընտանեկան բացառիկ դիրքին և

կամ, ինչ որ աւելի արամաբանական է, ուղղակի հոգեկան այն ազնուական նախանձախնդրութեան, որով ջանադիր գտնուած են իրենց գտնուած շրջանակին հմայքն ու պատիւը բարձր պահելու, միշտ ներկայանալի, միշտ պատուաբեր պահելով իրենց անձնաւորած դիրքը, նոյն իսկ շատ անգամ եւ վստահաբար չունենալով բաւարար միջոցներ արտաքինը լաւ ցոյց տալու:

Մեր հայ եկեղեցականութեան, մասնաւորաբար քահանայութեան ապրուստի միջոցներն ու նիւթականը ապահովող պայմաններուն նկատմամբ միջանկեալ այս պարագան պիտի չուզէի քրքրել, եթէ երբեք նոյն այդ մտայնութիւնները պահող ժողովուրդին հոգեբանութեանը մօտէն իրազեկ ըլլալով, առջի օրէն չտարուէի հանրային այդ ընդվզեցնող կարծիքներէն:

Շատ հետաքրքրական է արդարեւ քօղազերծել այդ հանրային կարծիքը, որ երկու որոշ հոտանքներէ և կամ քմածին խողովակներէ կը տարորոշէ հայ կղերականութեան դոյութեան հարցը:

Ըստ ոմանց, — ժողովրդային տեսակէտով — ընդհանրապէս եկեղեցականները երազային խեղճներով տողորուն մարդեր են, որոնք աստիճանաբար, տարիներու ազդեցութեան տակ, տեղի կուտան իրենց դիրքն ու պաշտօնը չյատկանշող ուղղութիւններուն, անզգալաբար հրաւիրելով իրենց վրայ հանրային տեսակ մը անտարբերութիւն:

Իսկ ստուար թիւ մը քննադատողներու, հարեւանցի ակնարկով մը արդէն իսկ արմատացած են իրենց սա դաւանանքին մէջ թէ անոնք մեծ մասամբ կեանքի պայքարին մէջ չյաջողած և բաղդազուրկ դասալիքներ են, ոչ մէկ անձնական համոզում ներկայացնող պայմաններու տակ նետուելով կրօնական ասպարէզէն ներս և հետեւաբար խեղաթիւրած կամ անպատուած են իրենց սքեմը:

Երբ հայ եկեղեցականին դիրքը յասկանշող բացատրութեան մը ատեն, «ժողովուրդէն ծնած ու ժողովուրդին համար» որակումով մը կը վերլուծենք ու կը ներկայացնենք զիրենք, հակասած չե՞նք ըլլար մենք նախ մեզի, սա բացայայտ տրամաբանութեան առջև թէ ուրիշ ազգերու կրօնաւորներէն շատ աւելի տոանձնայատուկ հանգամանքով մը ներկայացուցած ըլլալով հայ եկեղեցականը, անխոհեմաբար պատասխանատու և մեղադրելի դիրքի մը մէջ կ'իյնայ նոյն ինքն հայ ժողովուրդը, իր ամենէն նուիրական աւանդները վրտասկելով այդպիսիներուն...

Եթէ իրօք, կեանքի պայքարին մէջ չյաջողած գասալիքներ են անոնք, լուրջ բան մը չէ որ կ'ընենք մեր սրբավայրերը շահաստաններ դարձնելով այդպիսիներուն:

Ու այն ատեն մենք ենք որ, քաջալերելով զիրենք, պիտի ըսէինք այդ մակաբոյժներուն. — «Ետի՛դ նայէ... փոխանակ պաշտօնիդ բոլորանուէր մարդը ըլլալու... գիտնալու համար թէ ո՞րքան պիտի շահեցնենքեզ օրհնածիր խաչակնքումներդ...»

Արդարեւ գայթակղելի և ընդվզեցնող է այս մտայնութիւնը:

Ոչ, չենք կրնար երբեք համոզուիլ թէ ողջախոհ լըջութիւնը ինքնազիտակից և եկեղեցասէր ժողովուրդին, պիտի հանդուրժէր այսքան թեթեւամիտ գաղափարի մը որդեգրումին:

Ամէն նկատումներէ վեր, երբ Աւետարանի սրբազան աւանդապահութիւնը յանձնուած է եկեղեցականին, ի՛նչ գասակարգի և ի՛նչ աստիճանի վրայ իսկ ներկայանայ ան, պարտաւոր ենք վերաբերուիլ իրենց հետ իբրև «եկեղեցու ծառայողներ», «կրօնքի ներկայացուցիչներ» և «հոգեւոր մատակարարներ», որոնք կոչուած են հետեւելու ժողովուրդին քայլերուն, անոնց յաջողութեան թէ դժբախտութեան օրերուն մէջ, միշտ

հողատար, միշտ վիճակակից, քաջարթուն հովիւներ, ապրելով անոնց մօտ ինքնամոռաց անձնուիրութեամբ:

Աւետարանի «քրիստոսաւանդ խոնարհութիւն» բացատրութիւնը չենք կրնար թարգմանել տառացի մեկնութեամբ, հոգեւոր հովուութեան մը բարձր գաղափարականը բացատրած ատեննիս:

Պէտք ենք սրբազրել այդօրինակ տիրող մտայնութիւնները, եթէ չենք ուզեր որ վաղուան կրօնքի պաշտօնեան խոր վիրաւորանք մը զգայ, իր պաշտօնական դերազանցապէս բարձր ասպարէզին նուիրուած օրը, ինքզինքը գտնելով պայմանագրութեան մը առջեւ, որ պիտի սակարկէր իրեն հետ սա տեսակ պայմաններ... «Շահէ՛ այնքան չափով որ պիտի արամազրես եկեղեցիդ ու դերքդ ժողովուրդիդ քմահաճոյքին:»

Արդարեւ դժբախտ ու ցաւալի ինկածութիւն մը պիտի ըլլար եկեղեցականին դերը:

Եթէ կ'ուզենք որ հայ կղերը մնայ իր հոգեւոր պաշտօնին բարձրութեանը վրայ, եթէ կը պահանջենք իրմէ պատկառանք ու յարգանք ներկայացնող լրջութիւն, նուիրուածներ մտաւորական զբաղումներու եւ սոսկ հոգեւոր մատակարարութեան, խնայենք անոնց՝ մեր բովանդակ միջոցներովը՝ չգրաւուիլ նիւթական մտահոգութիւններով, որոնք խոչընդոտներ են իրենց առաջադրած նուիրումին արդիւնաւորութեանը:

Եկեղեցական բարեկարգութեան ծրագիրներ, առաջարկներ ու հայեցակէտներ ամէն ժամանակի մէջ մերթ ընդ մերթ օրուան հրատապ հարցերը եղած են այս տեսակ խնդիրներով հետաքրքրուող շրջանակներու մէջ: Խղճմտօրէն պէտք է քննել հարցը: Միջոցներ կան, որոնք նպատակ մը կ'արդարացնեն: Նպատակնիս արդարացնենք, միջոցները բարելաւելով փոխարեքարքար:



ԳՐՁԻ ԴԵՐԸ

Միակողմանի հայեցակէտներէ և վերադրումներէ տարուած չըլլալու համար սակայն, հայ ժողովուրդին հոգեբանութիւնը քննած ատեննիս պիտի արժէր որ վերլուծէինք զայն հակառակ ուղղութիւններով, քննելով պահ մըն ալ թէ մեր եկեղեցականներուն մտաւորական դասակարգը, իրենցմէ սպասուած պայմաններուն հանդէպ, ի՞նչ չափով արդարացուցած է իր հրմտութիւնը և ձիրքերը, և թէ նոյն իսկ ժամանակակից կրօնադրական օժտումներով զարգացեալ մեր յայտնի եկեղեցականները տուած են իրենց ցեղին բաւարար արդիւնքներ, զրական ու կրօնաբարոյական մարդին մէջ:

Յարգ գիտենք թէ, կրօնադրական յօռուածներու սահմանափակ ցանկէ մը դուրս, երկասիրութիւններու միջանկեալ շարք մը հազիւ ողջունուած է, որոնք իրենց ուսումնասիրած նիւթերով արժէքաւոր մատենաներ ներկայանային մեր աչքին տակ:

Թէեւ կարգ մը կարեւոր յիշատակութիւններու կը հանդիպինք զրական աշխատութեանց մասին, բայց հազիւ ցանցառ թիւ մը կը ներկայացնեն ծանօթ հին. թէ նոր եկեղեցականները, որոնք եթէ երբեք զըջի աշխատութիւններ իսկ ունեցած են (ըստ այդ արձանագրութեանց հաւաստումներուն), մամուլը սակայն շատ անբաւական թիւ մը միայն ծանօթացուցած է անոնցմէ, նա մանաւանդ ժամանակակից կրօնական գրիչներէ, ու մեծ մասամբ թանկարժէք աշխատութիւններ մտացութեան և կորսուելու վտանդին տակ ինկած են, եթէ երբեք արդէն իսկ ոչնչացած չեն:

Մասնաւորաբար վերջին քանի մը տասնեակ թրւականներու ընթացքին, Արմաշեան զպրեկմանքցիներ-

րու այնքան կարեւոր աշխատութիւններէն արդարեւ չենք յիշեր ոչ մէկ հաւաքական երկերու հրատարակումը, որոնք փայլուն վանական շրջանի մը մտաւորական փառքը պիտի ներկայացնէին այսօր:

Ո՞ւր են, օրինակի համար, այն կրօնագրական ու եկեղեցապատմական ուսումնասիրութեանց այնքան շահեկան հաւաքածուները, որոնք զիտենք թէ իբրեւ աւարտական թէգեր խնամքոտ աշխատութիւնով զրի անուամբ էին յաջորդական ընծայացու ընթացաւարտներէն:

Այս զգալի զանցառութեան մէջ, պէտք է խոստովանիլ թէ իր կարեւոր բաժինը ունի նաև ժամանակակից հայ մամուլը որ կրնար բաւարար կարեւորութեամբ հետաքրքրուիլ և զբաղուիլ կրօնական կեանքով, քան կարգ մը ապարդիւն հրատարակութիւններով, որոնք ոչ մէկ մտաւորական բարձրութեան եւ կամ հոգեկան ու բարոյական նկարագրի չէին կրնար առաջնորդել հայ ընթերցասէր ժողովուրդը:

Թերեւս մեծածախս պիտի նկատուէր այդ մասնագիտական հեղինակութիւններու հրատարակչական գործը, բայց կը կարծենք թէ տաճարները դեղազարդող հայ ժողովուրդին մէջ ամէն ատեն մեկենասներ չէ որ պակասած են, որոնք լայն չափով քաջալերած են հանրօգուտ ձեռնարկներ, վճարելով միշտ լիառատ ու անհաշիւ վեհանձնութեամբ:

Միև կողմէ, չենք ալ կրնար, յախուռն պահանջկոտութեամբ, անարդար վերագրումներ ընել մեր կրօնական դպրութեանց պատուական վաստակաւորներու հասցէին, երբ անդրադառնանք պահ մը, անձեռնտու պատահարներու հակառակ, մեր հայ եկեղեցականներուն կարեւոր դործունէութեանց մէջ ցոյց տուած կորովին:

Առաջնորդական պաշտօններու մէջ և թեմական կարեւոր աթոռներու վրայ ունեցած ենք վարչազէտ ու

ազգանուէր հովիւներ որոնք անուրանալի է թէ անձնագոհ նուիրումներով կազմած են իրենց վատահում թեմերը, կանոնաւորած են ժողովրդին մէջ կարգն ու սարքը, օժտելով հոն ազգային կեանքը լաւազոյն կազմակերպութիւններով:

Եւ նաեւ անմոռանալի է թէ եղած են ամէն կողմ ու ամէն անկիւն անձնուէր հովիւներ, մշտաբխուն առաջնորդներ:

Ոչ մէկ խօսք չունինք այս ամէնուն համար, տեւական յարգանքէ ու դրուատիքներէ դուրս:

Բայց ինչ որ սակայն անդարմանելի ցաւ մըն է մեզի և մեր նպատակակէտը արդարացնող կէտ, սա է թէ երբ ուզէինք պահ մը պրպտել անհետացողներու մոխրացած ածիւնները, ի՞նչ բան պիտի կրնար օժանդակել մեզի պատմելու և ապացուցանելու համար վաղուան հայ սերունդին թէ արիւնյաներկ մանգաղը հնձեր ու ոչնչացուցեր էր նաև հայ եկեղեցականութեան խոստմնալից ու պատուաբեր դէմքերը եւս, անվերադարձ ու անդարմանելի (դէթ շատ երկար շրջանի մը համար) կորուստներ տալով անճիտուած հայ մտաւորականութեան կողքին:

Կը կրկնենք ուրեմն, ինքնագիր աշխատութիւններու դրական ի՞նչ փաստեր ունինք ծանօթացնելու համար մեր սրբազան այդ կրօնական նահատակները վաղուան Հայութեան:

Եւ ինչո՞ւ անժառանգ մնար հայ վերապրող նոր սերունդը իր ցեղին կրօնական թէ ազգային հարազատ վաստակաւորներէն:

Ազգազայ եկեղեցական պատմութիւնը ս և է ձեւով մը կրնայ ներբողել անոնց յիշատակը, բայց գէթ տող մը բան ունենալու չէ՞ր իր սրբատուփին մէջ, մասունքի մանրիկ մը, որ պիտի խօսէր մեզի այդ վաստակաւորներուն ինքնաստեղծ ձայնն ու շեշտը, ըլլալով անշէջ լապտերներ մեր անշուք ու աւերակ մատենադարաններուն մէջ:

Աւաղ, գացին ու հեռացան անոնք, անժամանակ
ու յանկարծական, անյիշատակ ու անժառանգ, ցաւա-
զին քանի մը տող, վշտի ու սուգի հագիւ էջ մը, սե-
ւածիր մահազգներ թողլով իրենց ետին, իբրև տա-
նապող ազգի մը կտակը իրենց սգաւոր ժառանգորդ-
ներուն:

Կազմակերպելու և վերականգնելու նախաձեռնարկ
այժեր չէ որ կը պակսին մեր հայ եկեղեցականութեան
մէջ, բայց ինչ որ պիտի տեսականացնէր ու պիտի
յաւերժացնէր զիրենք, իրենց պարեգօտին տակ, գրա-
կան դաշտին եւս նուիրեալ զինուորներ եղած ըլլալու
գաղափարական զրախն էր, որ հանգրիցէր իրենց հո-
գեւոր տարազին խնկաբոյր ծալքերը:

Իցի՛ւ թէ մեր վերապրող եկեղեցականութիւնը
հանրօգուտ ծառայութեանց, հոգեւոր մատակարարու-
թեանց հոգեշահ և դաստիարակիչ քարոզութեանց
միացնէր նաև դպրութեանց աշակերտութիւնը եւս, ոչ
միայն ժամանակակից այլ և ապագայ սերունդներուն
գաղափարական վերազարթնումին սատար հանդիսա-
նալով:

Այս անկեղծ խանդավառութեամբ, նաև կ'ակնկա-
լենք պսակումը մեր բաղձանքներուն Մայր Սիօնէն,
«Նոր Սիօնի» ներհուն խմբագրապետէն, որ կը բերէ
մեզ կրօնադրական նոր գործունէութեան մը գեղեցիկ
թուականը:



ՎԱՂՈՒԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Տարիներու վիթխարի զլանը դարեր շարունակ պիտի թաւալի, բիւր ձեւափոխումներու ենթարկելով իր ճամբուն վրայ ինկող մարդկութիւնը:

Ի՛նչ կրօնքներ, ի՛նչ աղանդներ, արեւներու եւ կուսքերու ի՛նչ բազիններ գոյակերտուէր ու կործաներ են անյիշատակ:

Ամէն դար իր ազգային ու կրօնական յաւակնութիւնները պատգամեր է տիրող օրէնքներով, երբեմն ուժգին, երբեմն թոյլատու, և շատ անգամ հակառակորդ ցանցի մը մէջ շղթայելով բոլոր եկող ու անցնող սերունդները:

Չենք զիտեր ու չենք ալ կրնար երբեք, մեր արկար մարգարէացումներով, վճռել թէ ի՞նչ պիտի ըլլայ վաղուան մարդկութեան որդեգրած դպրոցը, թէ ի՞նչ նկարագիրներ պիտի ասորորոշեն ազգութիւնները, թէ ի՞նչ տեսակ վարդապետութիւններ պիտի բնորոշեն կրօնքներու ոգին:

Բայց ինչ որ կը շահագրգռէ մեզ, մեր վաղուան եկեղեցիին նկատմամբ, այն աւանդապահութեան հրամայական ձայնն է, որ կը պարտադրէ ձեռնասօրէն տեւականացնել անոր գոյութիւնը, աւանդուած բոլոր տուեալներով, անոր հարազատ ազնուականութենէն ոչ մէկ գիծ աղլաւաղելով, ոչ մէկ հպանցումներով վտանգելով անոր վեճ կառուցուածքը:

Բարոյականի վրայ հիմնուած կրօնք մը չի մեռնիր պատահական կոխտուումներով, որոնք խորթութիւններու նոր փաստեր, նոր ապացոյցներ կը յաւակնին որոնել անոր դարաւոր ակօսացումներուն խորքը:

Չենք հասկնար թէ բարեփոխութիւն մը ի՞նչ առումով և ի՛նչ հիման վրայ կ'ուզուի ներմուծել այն

հայկապ կառուցուածքէն ներս, որուն որմերը նահատակներու արիւնով շաղախուած են եւ որուն զմբէթը զսողութիւններու, անձնուիրութիւններու աննախընթաց գրոշմովն է օծուած:

Նոյն իսկ եթէ երբեք արարողական եկեղեցին ծիսականօրէն քննենք, պանծացումով կրնանք տեսնել թէ լեզուի ի՛նչ ներդաշնակ յօրինուածք, ազօթքներու ի՛նչքան հոգեշունչ բանաստեղծութիւններ, ալէլուներու ի՛նչ զմայլելի մեղերգներ ներդաշնակաւորած են անոր բովանդակ շէնքը, և Աստուածութիւնը փառաբանող անզուգական համազրութիւն մը կը ներկայացնեն, կենդանի, ուժեղ և հմայիչ մայր հարստութիւնը Հայ Եկեղեցիին:

Դարաւոր մեր հայ եկեղեցին, քրիստոնէական ուղտն այդ փառայեղ հաստատութիւնը, չի կրնար ոչ մէկ ձեւով իւրացնել ու է օտար միջամտութիւն, որ զար քօղազերծել ենթադրական սրբազրութեանց կարօտ խորշոմները որոնք իբր թէ անոր գեղակերտ ճակատը կը բծաւորեն...:

Ժամանակը արդէն իսկ մասնակի տպաւորութիւններով ազդեր է անոր վրայ, և միթէ չի՞ նշմարուիր, նոյն իսկ շատ մօտիկ անցեալի մը հետ բաղդատելով, արդիական դրուագներէն և արտայայտութեան ձեւերէն թէ արդէն իսկ սրբազրութիւններու ենթարկուած է բաւական չափով մը:

Արդարեւ կըմբռնենք թէ եկեղեցին ժողովուրդին համար է, բայց քամծին քայլ մը պիտի չվտանդէ՞ր անոր առանձնայատուկ հնաւանդ նկարագիրը:

Երեւակայական թոհիչքով մը պահ մը փոխադրուինք դէպի դար մը աւելի առաջ, տեսնելու համար թէ ժամանակի ընթացքին ո՛րքան ծպտումներու ազդեցութիւնը կրած պիտի ըլլայ նորագոյն եկեղեցին:

Ոսկեդրուագ տաճարը համակ ելեկտրականացած, ամէն ինչ ինքնաշարժ, սեղան, վարագոյր, աթոռներն

ու բեմը վերջին նրբութեանց համապատասխան ձե-
ւափոխումներու տակ կը ներկայանան:

Միասակատարութիւնները մեծ մասամբ համառոտ-
ուած, կրճատուած եւ գրեթէ բոլորովին ջնջուած:

Բայց ինչ որ ձեր հետաքրքրութիւնը պիտի շար-
ժէր, վատահաբար ունկնդիր հաւատացեալներու աչ-
քառու բացահայտութիւնը պիտի ըլլար ան, որոնք կը
դժկամակէին գալ — ինչպէս միշտ — պարզապէս ա-
նոր համար որ դժգոհ էին արարողութեանց երկարու-
մէն, կրօնքի ու եկեղեցւոյ անկրապույր հանգամանքէն
ձանձրացած:

Ու աներկմիտ եմ որ երբ պահ մը հաւատացեալ-
ներու այդքան ցանցառ թիւը մատնանշէիք, պիտի
պատասխանուէր ձեզի.

« Եկեղեցին զոր կ'այցելէք այսօր, նոր հիմնարկու-
թիւն մը չէ: Սն կը ներկայացնէ դարաւոր հնութիւն
մը թէեւ, բայց ժամանակակից պահանջումներու հա-
մապատասխան ձեւափոխուած ու կարեւոր նկատուած
նորոգութիւններ կրած է...:

« Ներկայ ժողովուրդը գրեթէ նոյն անձերն են միշտ
որոնք իրենց եկեղեցասէրի զգացումներէն տարուած
չէ որ կուզան, այլ անձնական գործերու կարգադրու-
թեանն պետքէն անցողակի ներկայ կ'ըլլան ժամերգու-
թեանց:

« Ի՞նչ կ'արժեն յառաջդիմական պիտակներ ու
նորամուտ սովորութիւններ: Իցի՛ւ թէ հաւատքի վե-
րանորոգումը կտակէին մեզի մեր նախնիք, այն հա-
ւատքին որ վառ պահեց ինն դարերու հայ պապենա-
կան օճակը:

« Հայ եկեղեցիին դամբարանն է որ կ'այցելէք այ-
սօր: Հանգստաւէտ բազիլիթոններ ու թանկարժէք օ-
թոցներ տրամադրեցինք ժողովուրդին, բայց ի՞նչ օ-
գուտ, եթէ կը պակսի անոնց մէջ այն կրօնական յար-
գանքի ու ակնածանքի ջերմութիւնը որուն մէջ լուս-

ցին մեր նախահայրերը իրենց կոյս ու բարեպաշտիկ հոգիները: Ի՞նչ արժէք ունի կահաւորուած ոսկեղբր-ուազ տաճարներ կերտել, երբ մեր հայրերը բոկոսն կ'երթային ծնրադրել միամիտ ու սրտազեղ, իրենց ուխտը նուիրելու համար սրբատաշ խորաններու պատ-ուանդանին, ճշմարիտ հաւատամքը իրենց շրթներուն վրայ ու հաւատքը սրտերնուն մէջ:»



Հայ եկեղեցին ամէն բանէ առաջ պէտք է վերա-կազմէ իր եկեղեցականութիւնը: Կը կրկնեմ, բարեփո-խութիւնն և վերակազմութիւնն հայ եկեղեցականութեան:

Թողէ՛ք եկեղեցին, մի վրդովէք անոր դարաւոր հմայքը: Եթէ ձերացած է, միշտ քաջատղջ է ան, եթէ ալեւորած է՝ միշտ կորովի, եթէ տարէց՝ բայց միշտ երիտասարդ է ան:

Դարձուցէք ձեր ուշադրութիւնը դէպի այն միւս տաճարները, ուր պէտքը այնքան զգալի է հիմնական վերանորոգումի մը:

Թրծեցէք անոնց հիմերը կորովի ու նկարագրի կենդանութեան շաղախով: Ձեր արիւնտով ու քրտին-քովը դրոշմեցէք անոնց ճակտին դպրոց վերտառու-թիւնը: Չարդարեցէք անոնց սիւները սրբազօծ բարո-յակամով և գմբեթագարդեցէք զայն առողջ դաստիա-րակութեան բարձրաքանդակ հովանիով մը: Իրէք նոր սերունդին մատներուն տակ մայրենի գրիչը որ պիտի գծագրէ անոնց նայուածքին տակ ուշադիր այբուբէնը, ու այդ սուրբ տառերով սորվեցուցէք խմբագրել անոնց եկեղեցի ու կրօնք բառերը ու անոնցմէ շաղկապուած ազգ ու ապագայ նախադասութիւնները, որոնց համա-դրութենէն պիտի կարգայ իր ցելը:

Ակօսեցէք անոնց մտքերուն մէջ գերագոյնին ազդեցութիւնը և հոգեւոր կեանքի մը անհրաժեշտ տարերքը, որոնք նախանիւթերը պիտի ըլլան անոնց յաջորդական կազմաւորութեան:

Ու վստահ ըլլանք թէ մեր բովանդակ ջանքերը պիտի արդիւնաւորուին անվրէպ ու վաղը անոնք պիտի ներկայացնեն պաշտօնէութեան մը այն հսկայ կազմը, որուն կը պարտին յառաջագէմ ու կատարելագործուած ազգեր իրենց դոյութիւնը, կազմակերպող ու գիտակից սյժերով զօտեպնդուած մշակներ ծնելով:

Պէտք է նախ և առաջ սրբատաշ անօթներ ձուլել, պարփակելու համար հոգեկան սրբալոյծ նեկտարը, որ իրենց պիտի մատուակուի հոգեւոր սեղանէն:

Բոլոր ծրագիրները պիտի վիժին, բոլոր կարծիքները պիտի անիրականանան, բոլոր իղձերը պիտի գերեզմանուին և հակասութիւններ դիրար պիտի լսաչաձեւեն ապարդիւն, որքան ատեն որ ճշմարտութիւնները պիտի խեղաթիւրուին անձնիւր տարակարծութիւններու տակ:



Վստահ ըլլալով որ դպրոցը, իբրև հիմնական կրթարան մը վաղուան սերունդին, նորագոյն առաջադրութիւններու հիման մը վրայ պիտի կրնայ միայն արդիւնաւորել մեր գեղեցիկ ու շինիչ բաղձանքներն ու ակնկալութիւնները, վերագառնանք կրկին հայ եկեղեցականութեան՝ մօտ, անպամ մը եւս վերլուծելով ժողովրդային հոգեբանութիւնները, այժմէական մտայնութիւններու կալուածին մէջ քննելով հայ եկեղեցականին դերը:

«Հայ Սօսնակ»ի ժրաջան խմբագրապետը փորձառական տեսութիւն մը ընելով իր կրօնաթերթին մէջ,

հայ եկեղեցականութեան գործունէութեանը ակնարկող յօդուածով մը անվերապահօրէն մատնանշած էր այն կարգ մը դրդապատճառները որոնց երեսէն ժողովուրդային վերաբերումը դէպի իր կրօնքն ու եկեղեցին, տակաւ տկարանալով, դէպի ուժացում կը դիմէ օրըստօրէ:

Արդարեւ պէտք ենք անկաշկանդ դատողութեամբ հետաքրքրուիլ այն ամէն կենսական հարցերով որոնք ծանրակշիռ պատասխանատուութիւններ կը հրաւիրեն իրենց վրայ, վստահ ըլլալով թէ միակողմանի ու տարտամ չէզոքացումներ պիտի վտանգեն նոյն ինքն այդ կենսական հարցերուն ներկայացուցած կարեւորութիւնը:

Արժանայարդ յօդուածագիրը, խորունկ նախանձախնդրութեամբ համակուած, կը թելադրէ իր հոգեւոր եղբայրակիցներուն — ամէն աստիճանի ու դիրքի վրայ — լրջօրէն նուիրուիլ ու շարունակել Առաքելութեան անձնուէր գործը, չսահմանափակուելով առօրեայ զբաղումներու մէջ:

Նախանձայոյզ բողոքի մը արդար ձայնն է որ կըրկին կը բարձրանայ եկեղեցւոյ ժրջան մշակէ մը, որ օտար մարդորսներու կազմակերպուած ոյժին հանդէպ շատ իրաւացիօրէն տկար ու անբաւական կը գտնէ ներկայ հայ եկեղեցականութեան հաւաքական գործունէութիւնը:

Բարեղէպ զուգադիպութեամբ, անա մէջը բերում մը նոյն ինքն այդ շահեկան յօդուածէն զոր կարդացինք «Հայ Սօսնակ»ի 1925ի 11րդ ամսաթուին մէջ, ուր Արժ. Խմբագրապետը շեշտելով առաքելութեան մէկէ աւելի օգուտները, շատ նպատակայարմար տեսութիւններով կ'արտայայտուի հայ եկեղեցականութեան ստանձնած պաշտօնին հանդէպ. —

« Հայ եկեղեցական պատմութիւնը լեցուն է Քրիստոսի սուրբ կրօնքին համպուած քարտիչներու, ճշմարիտ առաք-

եալներու եւ մարտիրոսներու հոյակաւ մը, որոնք ամէնէն աննպաստ պարագաներու եւ պայմաններու մէջ զիացած են բարձր բունել հայ եկեղեցւոյ դիրքը, ընդհ. քրիստոնէական եկեղեցիներու շքանակին մէջ:

« Առաքելութիւնը զոր ներկայիս կը փնտռենք հայ եկեղեցականութեան մէջ, բոլորովին սարքեր, մասաւ պատկեր մը կը պարզէ մեր աչքին:

« Մինչ օտար եկեղեցիներու հոգեւորականութիւնը, օտառուած որոշ կազմակերպութիւններով, կը շարունակեն առաքելութեան գործը, հայ կեանքին մէջ զգալի կերպով նուազեր է այդ եռանդը:

« Պայմանները ու պարագաները փոխուած են հիմա: Իր բնավայրէն հեռացած, օտար ատղերու տակ եւ սփռուքներու վրայ ցրուած թախուալոյց հայ ժողովուրդ մը ունինք, որոնք իրենց կեանքը կը քաշքշեն ամէն սեռակ բարոյական վտանգներու ենթակայ:

« Եւ ստանց կը պակսին զիրենք սրտապնդող, զանոնք իրենց ցրտանալու վրայ եղող հաւատքին կապող առաքելականութիւնը:

« Հայ եկեղեցւոյ համար ամենամեծ դժբաղդութիւնն է օրուան պահանջներուն համապատասխան բարձրութեան վրայ գտնուող, պէտք եղած թիւով նուիրուած անձեր չունենալը: Իրաւ է թէ կարելի չէ ամէն ինչ պահանջել հայ եկեղեցականութենէն որ բարոյական, իմացական եւ նիւթական ամէնէն աննպաստ պայմաններու մէջ կը գտնուի: Բայց անտարբերութիւնը մահ է:

« Եթէ օտար մարդորաներ կը դործեն մեր մէջ, եթէ անոնք՝ հայ գիտակից հոգեւորականութեան մը, նուիրուած պաշտօնէութեան մը պակասէն օգտուելով՝ այս կամ այն կերպով հայ եկեղեցւոյ ծոցէն կը հեռացնեն իր վաւակներէն մէկը կամ միւսը, յոնցանքը մերն է. անոնք իրենց դերին մէջն են, անոնք իրենց պարտականութեան բարձրութեանը վրայ կը գտնուին:

« Հայ եկեղեցական, իոնորհագոյնէն սկսեալ մինչեւ ամենաբարձր աստիճանաւորը, մեզի եւ առուել քան երբեք մեզի կ'իյնայ նուիրուել՝ հոգեւոր կեանքը վերապրեցնելու համար հայ ժողովուրդին մէջ:

« Պէտք է գրկել, պէտք է խօսիլ, պէտք է շարժիլ նուիրական կրակով ոգեւորուած, զի հակառակը մեր բարոյական մահն է: »

ՊԱՇՏՕՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԱՅ

ժողովուրդին մէջ տիրող մտայնութիւններէն, անհրաժեշտ է որ անդրադառնանք նաև սա կէտին թէ Հայ Եկեղեցին տակաւ կորսնցնելու վրայ է իր աղօթատելիի մը իմաստօր, թէ անոր իսկական արժէքն ու բնոյթը տեղի տուած են արտաքին ձեւակամութիւններու, հանգամանք մը որ նսեմացուցած է նաև եկեղեցւոյ մը բարձր գաղափարականը, շփոթելով զայն իր կրօնական ոգւոյն հետ :

Եկեղեցին, որ արարողական և ծիսակատարական սովորութիւններու կիրարկումով անդալաբար կորսնցնելու վրայ է աղօթատեղիի մը վսեմ պարզութիւնը, շատ բան պիտի զեղչէ ուրեմն ներշնչող սըրբավայրի մը հանգամանքէն նաև, եթէ խեղաթիւրուի բուն նպատակին լըջութիւնը, եթէ լայն տեղ տրուին արտաքին ձեքծեքումներու և աւելորդ սեթեւեթներու :

Նպատակի մը ձգտող խորհուրդը, ուր ինքնամփոփ աղօթողներ, խոստովանողի և խոստովանցնողի պարզութեան մէջ, պէտք է որ յարաբերութեան մը տանեն Աստուծոյ հետ, հոգեւոր հաղորդակցութեան մէջ զնկլով զիրենք իրարու հանդէպ, դարձած է արտաքին ձեւակամութիւններու առանցքը, ուր անձերն ու իրերը, ձեւերն ու տարազը լայն չափով մը մտքերու վրայ տպւորած ըլլալով, եկեղեցին կը մեկնուի ու կը ճանչցուի այն արժէքով կամ իմաստով որ կը ներկայանայ այս կամ այն երզողին կամ այս ինչ ծիսակատարին և կամ այն ինչ հանդիսադիրին յայտ բերած արտաքին ազդեցութեանը տակ :

Յատկանշական իրողութիւն մըն է նաև թէ մեր եկեղեցին իր արտաքին պահուստներին տակ հետաքրքրական ? Լև հաճելի ? դարձուցած ենք, լոկ այն

համեմատութեամբ որ անոր ունէ մէկ ներկայացուցիչը լաւ կամ յոռի տպաւորութիւններու եւ կամ նպաստաւոր կամ աննպաստ ազդեցութիւններու տակ պահած է ժողովրդային զգացումներուն արժէքը:

Արդարեւ շատ հետաքրքրական ու նշանակելի են այս հանգամանքները ու այնքան խորապէս արմատացած են այս տարօրինակ մտայնութիւնները ժողովրդային ամէն խաւերու մէջ, որ այլեւս պէտք չկայ հարցնելու թէ հաւատացեալներու խումներում թիւ մը քանակի՞ն թէ սրակի՞ն, հոգիի՞ն թէ նիւթի՞ն, պարունակողի՞ն թէ պարունակեալին յարումն ունի եկեղեցիէն ներս:

Աններելի և վտանգաւոր զանցառութիւն մը պիտի ըլլար արմատացած պահել այս թիւը հակումները՝ եկեղեցւոյ և ժողովուրդին իրարու հանդէպ ունեցած յարաբերութեանց կրկնակ տեսակէտով:

Որքան ալ սկեպտիկ նկատուին օտար ժողովուրդներ, որքան ալ կարծուի թէ անոնք հեռու կ'ապրին իրենց եկեղեցիէն, ընդունինք թէ շատ ու շատ դժուարահաճ ու պահանջկոտ նախանձախնդրութեամբ կազմակերպած են իրենց ազօթատեղիները:

Մտնենք պահ մը ունէ օտար եկեղեցիէ մը ներս, ու վտան ըլլանք թէ այն առաջին տպաւորութիւնը որ պիտի առինքնէր մեզ, հոն տիրող պատկառանքը, մաքրութիւնը, լրջութիւնը եւ կարգապահութիւնը պիտի ըլլար:

Ամեն քանի առաջ, պիտի նշմարէինք հոն, այդ խնկաւէտ մթնոլորտին ու վեհափառ լուծեանը մէջ, խորհրդաւոր ձեռքի մը հպումը մեր ուսերուն վրայ, որ պիտի ըսէր մեզի. «Բա՛ց դուք ու պատկառանքով խոնարհէ այս կամարներուն տակ և զիացիր թէ այս վեհ ու հոյակապ տաճարէն վեր մե՛ծ մէկը կայ:»

Անժխտելիօրէն պարտաւորիչ է նկատի առնել այս պարագան, նա մանաւանդ օտար միջավայրերու մէջ,

ուր յաճախ կը նշմարուին հետաքրքիր օտարականներ որոնք ստէպ ներկայ կ'ըլլան հայ եկեղեցական արարողութեանց, սովորաբար մանրագնին ուշադրութեամբ հետեւելով տիրող կարգուսարքին:

Անդուզականօրէն անանձնայատուկ մեր հայ կրօնական արարողութիւնները, որոնք անկեղծ հիացում պատճառած են նոյն իսկ օտար եկեղեցիներու, դէթ գիտնանք արժանապէս ներկայացնել, խնամով դասաւորելով անձերն ու տիրող կարգերը, անսեթեւեթ լրջութեամբ կերարկելով զանոնք, վսեմ խորհուրդը չխանգարելով քմածին խաղարկութիւններով:

Արմաշեան բազմարդիւն դէմք մը կը զբէ նմանօրինակ խորհրդածութեան մը շուրջ, գեղեցիկ կերպով վերլուծելով պատիկ ու աննշմար պատճառներու նկատմամբ մեր ցոյց տուած վտանգաւոր զանցառութիւնները.

Ամէն անհատի յաջողութեան եւ ընկերութիւններու զարգացման մէջ, թեթեւ պարտականութեանց հանդէպ անթերի գտնուելու փոյթը, հաղիւ նշմարելի պարագայներու մէջ ուշադիր ըլլալու արտագրութիւնը, աննշան հաշիւներ միշտ զոնց չընեւու նախանձախնդրութիւնը, չնչին զոհողութիւններ ստանձնելու եւ անդը իրենց մեծ նշանակութիւնը ունեցած են, եւ իւրաքանչիւր անձի բարբախտ կեանքի յօրինուածքին հիմունքը կազմելէ վատ, մարդկային ճակատագրին վրայ մեծ դեր մը ունեցող ամբողջ կազմակերպութեանց, ընկերութեանց, ազգաց եւ կրօնքներու տեւականութիւնը ապահոված են:

Այսպէս ուրեմն թէ ազգաց եւ թէ կրօնի պատմութիւնները կը թեւադրեն մեզ հուստարմութիւն փաքրագոյն բաներու մէջ:

Բայց այս բազայայտ եւ անհրաժեշտ պարտականութիւնները արդեօք մենք ի՞նչպէս կը կատարենք:

Մենք, զօրօրինակ, եկեղեցական բարեկարգութեան մեծ խորհուրդներ եւ մեծ ծրարիւններ ունինք. արդարեւ ազնիւ եւ հայրենասիրական ծրարիւններ են եւ գովեստի ու ծափահարութեան արժանի կը նկատուին անոնք, որոնք կարեւոր եւ շինիչ ծրարիւններ կը բերեն ու կը ներկայացնեն հանրութեան:

Ամենքս ալ կը փոփոքինք եւ կը խոտանանք մեծ-
մեծ այգ ձեռնարկները ի գործ դնել, ստիպողութիւն տա-
լով նոյն խի, եւ ներքին ուրախութիւն մը մեզ կը խան-
դավառէ ծրագիրներու ընթեքցման կամ ունկնդրութեան
պահուն:

Սակայն այս մեծ փոփոքը, այգ ջերմ խանդավառու-
թիւնը, այս բուռն իղձը, այն կարեւոր խորհուրդները չենք
կրնար իրականացնել, քանի որ երբ պատեհ աւելի կը ներ-
կայանայ գործակցութեան եւ նպատակին իրականացման,
անձնական նկատումներ, յետին միտքեր, անպատելի առար-
կութիւններ, տարօրինակ անհասկացողութիւններ կուգան կը
խանդարեն ծրագիրներն ու խորհուրդները եւ անհիտւումս
բուրդովն կը շեղինք ու կը հեռանանք:

Եթէ բարեկարգական այս խորհուրդներուն գործին ար-
դիւնաւորման համար քիչ մը վստողութիւն ընէինք, եթէ
մեր անձնական նկատումները թեթեւ ինչ պակեցնէինք,
եթէ մեր վեճաբանութեանց սակաւ ինչ վերջ տայինք կամ
եթէ մեր անձնական հաշիւները դոյզն ինչ նկատողութեան
չառնէինք, յայնժամ եկեղեցական բարեկարգութեան գոր-
ծը պիտի կրնայինք իրականացած տեսնել իր բոլոր առաւե-
լութեամբը:

Եթէ մեր եկեղեցականները քիչ մը մէկ կողմ գնէին
երկմտութիւնը, քիչ մը անհատական շահերը վստէին ընդ-
հանուրին ոգտին, սակաւ ինչ հոգ տանէին ըմբռնելու բար-
բեկարգութեան գործին նուիրականութիւնը, յայնժամ ամէն
կերպով կրնայ լաւագոյն արդիւնքներ տեսնուիլ եւ նպո-
տակի մը հասնիլ:

Եւ գիտենք թէ այս մտքը պարագաները, աննշան հա-
շիւները եւ անկարեւոր կէտեր նկատածները դանց ըլլալով,
ժողովուրդը անխուստիելիօրէն կ'առաջնորդուի եկեղեցին
ուծանելու եւ սպառնալու առ սակաւ եկեղեցական բարե-
կարգութեան հարցերու ծրագիրներն ալ սեղանին վրայէն
կը վերնան, վիժեցնելով ամէն գաղափար ու արդիւնք:

* * *

Եկեղեցանուէր հովուի մը սա քանի մը տողերը
ինքնին բաւական են, մտածել տալու համար թէ

ճ'րքան անյետաձգելի է ազգի մը բարոյական մակար-
դակը ցոլացնող եկեղեցիին բարեկարգութիւնը, իր
ամէնէն աննշան մանրամասնութիւններէն իսկ դա-
տելով:

Եւ ի՞նչ բան պիտի կրնար ներկայացնել մեզ, նա-
մանաւանդ տառապանքի շրջաններուն մէջ, եթէ ոչ
այն եկեղեցական մաքրակրօն հոգատարութիւնը, որ
դափնեպսակը եղաւ օրինուած Հայուն, անոր ընտանե-
կան օճախն ու սրբազան աւանդութիւնները յատկա-
նշող: Եւ յետոյ, ճ'րքան լուրջ, ճ'րքան նախանձախըն-
գիր պէտք ենք ըլլալ նաեւ մեր եկեղեցականներու
ընտարութեանց մասին, երբ անհերքելի ճշմարտութիւն
մըն է թէ մէկը ամբողջին դէմ եւ ամբողջութիւն մը
մէկի դէմ գիրար պիտի լրացնեն, գիրար պիտի ներ-
կայացնեն, և անխաղ իր վրայ պիտի անձնաւորէ հայ
անունին, հայ նկարագրին և հայ պատիւին ստեղծա-
գործ գրոշմը:

Բացայայտօրէն համոզուած ենք թէ ազգի մը բա-
րոյականը որքան իր քաղաքական կեանքէն, նոյնքան
ալ իր եկեղեցիէն պիտի ճանչցուի, և եկեղեցին ալ
իւր կազմակերպութենէն, իր մարդոցմէն, իր ներկայա-
ցուցիչներէն:

Հայ եկեղեցականը անտարբեր չի կրնար մնալ
ուրեմն՝ իր կարգին՝ այս կենսական հարցին, մանա-
ւանդ որ իրեն վիճակուած է առաջնորդել, ներկայա-
ցնել բարոյական կեանքը, տիրող կրօնքի մը հովա-
նիին տակ որ պարզութեան և խոնարհութեան պատ-
գամը ունի իր շրթներուն վրայ:

Հայ եկեղեցին ու եկեղեցականութիւնը համարժէք
նկատելով, հայ ժողովուրդին ցոյց տուած փոխադարձ
վերաբերումին հանդէպ ներդաշնակութեան գերեցիկ
արդիւնքը պիտի արժեցուցուի արդարեւ այն ատեն
միայն, երբ կարենանք համոզուած ու գիտակից ուխ-
տեալներու շարք մը ներկայացնել հանրութեան,
պատուաբեր ու գնահատելի արժանիքներով:

Երբ սկեպտիկ բառը կը գործածենք ստէպ, կը հասկցուի բնահանաբար այն դեռատի դասակարգը որ ոչ մէկ գնով կ'ուզէ հաշուել կրօնաբարոյական կեանքի մը հարկադրող դադափարին հետ, սա մ'իսկ յաւակնոտութեամբ թէ՛ գիտութեան եւ զարգացման դարը կը ժխտէ հոգեւորական բարձր իտեալի մը նուիրումը:

Արժէք պիտի չունենայ հեզնանք մը, որուն մէջ կը պակսի լուրջ դատողութիւնը:

Տրամաբանութիւնը չի կրնար ժխտել հաւատքին ոյժն ու կարեւորութիւնը: Երբե՛ք:

Ըլլանք անաչառ քննադատներ՝ արժեցնելու համար մեր հակումները և մեր վարդապետութիւնները ու եւ հարցի շուրջ, եթէ սակայն անոնք, կանխակալ կարծիքներէ տարուած չըլլալով, խնամով պահեն իմաստասիրական վերլուծումներու նկարագիրը:

Որքան ալ դժուարահաճ ըլլանք մեր հետազոտութեանց մէջ, նոյնքան և աւելի պիտի սիրենք կրօնի մը ներշնչած բարձր դադափարականը:

Գիտութիւնը ընդհակառակը պանծացուց կրօնքը ու խոստովանեցաւ թէ իր բրիչի հարուածներուն տակ թաքուն, դերագանցօրէն դերբնային ոյժ մը կայ:

Եկեղեցականութեան հասցէին մնուցած դադափարներս, համոզումներս ու մտածումներս խտացնելով մ'իսկ նպատակակէտի մը շուրջը, չպիտի ուզէի աւելի ծանրանալ եկեղեցւոյ բարոյական ոգւոյն հանդէպ մեր ցոյց տալիք միակամ նախանձախնդրութեան նկատմամբ — ինչ որ պիտի շեղեցնէր մեզ խնդրոյ առարկայ եղած նիւթէն — , այլ կարգ մը բարենախանձ վերլուծումներս և խորհրդածութիւններս բաւական համարելով, խոնարհաբար սրտագին կոչ մը ուզղել պիտի բաղձայի մեր հոգեշնորհ ու պատուական

ուխտեալներուն՝ ամէն բանէ առաջ բարձր բռնել
իրենց անձին բարոյական պատկառանքը, արդիւնաւո-
րել ստանձնուած բարձր պաշտօնին պատասխանատու
պայմանները, ներշնչել յարգանք ու սկիւածանք օրի-
նակելի լրջութեամբ, պաշտպանել հայ բազմաչարչար
եկեղեցւոյն դարաւոր անսնդուծիւնները նուիրական
զոհաբերութեամբ:

Ու խնայե՛լ այն խնկաւէտ Ս.բեմին, որ մաքրա-
կրօն նահատակներու սրբազան նշխարները ծրարեց
իր մէջ, ու սրտեռանդն նուիրուի՛լ սրբազան ասպա-
րէզին որ հայրենամուէր ուխտեալներ երկնեց իր ծոցէն:

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄ

Խորհրդածուած նիւթի մը շուրջ, անմիջական տպաւորութիւններու և արտայայտութիւններու տակ գրի առնուած տեսութեան մը մէջ, կ'արժէր որ նոյն ինքն այս տողերը գրողը ինքն իր վրայ անդրադարձում մը փորձէր, տեսակ մը ինքնաքննութիւն, ուր յայտնուած գաղափարներու սրղեգրումը պիտի վերլուծուէր աւելի բացորոշ ծանօթացումներով, հաղորդակից պահելով ընթերցողը և պատճառաբանելով անգամ մը եւս այն նպատակը և դրդապատճառները որ թելադրեցին նօթագրել զանոնք:

Շատ պարզ է թէ նիւթը, որ զբաղեցուց զիս, լոկ անձնական զգացումներու և շատ երկար տարիներէ ի վեր եկեղեցական շրջանակի մը անմիջական ազդեցութեան արգիւնք ըլլալով հանդերձ, նուիրումի մի բարձր գաղափարականէն տարուած մտասեւեռում մըն է, որ առջի օրէն կը ձգտէր մէջս դէպի իտէալը հայ եկեղեցականութեան բարձրացման:

Ո և է հարց որ կը հրաւիրէ իր վրայ անհատական կամ հանրային ուշադրութիւն, կարեւոր չափով մը նպատակ ունի նոյն այդ հանրութեան ընդգրկած մտայնութիւնները մասնանշել, աւելի բացարձակ նկարագիր մը հետապնդելով անոր մէջ, ուր ընդունարուած թերութիւններ, գեղեցիկ թելադրութիւններով, կը յանգին բաղձալի եղրակացութիւններու և արգիւնքի մը:

Կ'ընդունինք ուրեմն թէ որքան ատեն որ պիտի փափաքինք ապահովել մեր ազգային կրօնական կեանքը ներկայացնողներուն դիրքն ու հմայքը, պաշտպանած պիտի ըլլանք նոյն չափով մեր իսկ անհատական ու ընկերային նախանձախնդրութիւնը:

Անհերքելի ճշմարտութիւններ են ասոնք և դնահատելի այնքան ուժգնօրէն, որքան պարտաւոր ենք համոզուելու համար թէ «պէտք է բարձրացնել՝ բարձրանալու համար», և փոխադարձաբար:

Ու մտքով սրտով հայութիւն մը պիտի չկրնանք երբեք ըլլալ, որքան ասէն որ չխոստովանինք թէ մեր տկարութիւններուն գիտակից ենք, հակառակ անոր որ տոնիմային մասնայատուկ ծիրքեր ու տիրական արժանիքներ ունինք՝ կատարելագործուած տիպար ազգ մը նկատուելու:

Երբ հայ Եկեղեցւոյ բարեկարգութիւն կ'ըսենք, պիտի ուզէի կրկնել ու շեշտել սա թէ ատոր մեծ նպատակն է վեր բարձրացնել հայ Եկեղեցւոյ և եկեղեցականութեան մակարդակը, որ անհրաժեշտութիւն մը կը ներկայացնէ և հետզհետէ օրուան մտահողիչ հարցն է:

«Հայ Եկեղեցականութիւնը և իր Դերը» ընդհանուր խորագրով երբ կը թելադրէի, համեստ պայմաններու ու կարողութիւններու մէջ, քննել ու վերլուծել մտածումներս ու բաղձանքներս, չէի կրնար երբեք յաւակնիլ թէ նիւթը, իր ընդգրկած առաջադրութեան մէջ, ընդհանուր տեսութիւն մը կամ եկեղեցականութեան պատմադրութիւնը պիտի ներկայացնէր, գիտնալով թէ անկարելի էր քանի մը տկար տողերով բաւականանալ, պատկերացնելու համար հայ Եկեղեցականութիւնը իր բովանդակութեանը մէջ: Բազմահմուտ կրօնազէտ պատմաբանի մը իրաւասութիւնն է այդ, եկեղեցազէտի մը մասնագիտութեան գործը, որոնք միայն պիտի կրնային բազմահատոր աշխատութիւններով ներկայացնել, քննադատել կամ ներբողել ճշգրիտ կեանքն ու գործունէութիւնը մեր այն երանաշնորհ եկեղեցականութեան, որոնք տարիներէ ի վեր իրենց ազգանուէր և եկեղեցաշէն ծառայութիւններով հաստատուն հիմնաքարը եղան Հայ Առաքելական Եկեղեցւոյ փառաւոր կառուցուածքին:

Բացայայտօրէն պարզ էր ուրեմն նպատակս երբ աչքի առջեւ ունինք այսօր օտար միջավայրերու շլատող ազդեցութեան տակ թափառական ժողովուրդ մը, անհաղորդ նկարագիրներու ցանցով շրջապատուած և ուժանալու հակամէտ, և ատոր դէմ ուժեղ ու զիտակից եկեղեցական գործիչներու համեմատապէս անբաւական թիւ մը, իբրեւ այդ ժողովուրդին կրօնաբարոյսական կեանքին աննկուն ազդակներ, որոնք կարող ըլլան տեւականացնելու դառնացած և յուսալքուած ժողովուրդի մը տոհմիկ եռանդը:

Եթէ մասնաւորաբար Արմաշեան միաբաններու նկատմամբ յաճախակի ակնարկութիւններ ըրած եմ խորհրդածութիւններուս ընթացքին, լայնօրէն տեղ տալով իրենց յայտնած գաղափարներուն և մէջբերումներ ընելով իրենց մտածումներէն, ոչ թէ անոր համար որ անոնք միայն կը ներկայացնեն մեր ժամանակակից եկեղեցականութիւնը, հապա, որքան ալ ցաւառօթ հիասթափումներ կրեցինք իրենցմէ շատերէն ու որքան ալ ցնցող միջանկեալներ համրեցինք իրենց ընկերներէն, անկողմնակալօրէն հետեւելով իրենց մեծամասնութեանը քայլերուն՝ անվերապահութեամբ կըրնանք խոստովանիլ թէ ոչ միայն նահատակներու և զոհերու լուսապսակով, այլեւ արժէքով իրաւունք շահեցան անձնագիտակից ծառայողներ նկատուելու հանդէպ իրենց պատկանած Ազգին ու Եկեղեցիին:

Այո, զբաղեցանք իրենցմով և օրինակներ բերինք իրենցմէ, պարզապէս անոր համար որ մենք թրքահայերս շատ մտերիմ հաղորդակցութեամբ ապրած ըլլալով իրենց հետ, անմիջական տպաւորութիւններ կրեցինք իրենց մտաւորական արժանիքներէն, ու զիտենք թէ երկար տարիներու ազդեցութիւնները երկրորդ բնութիւններ կ'երկնեն:

Եթէ ուզենք քննադատել զիրենք, աննախապաշար աշնուականութեամբ և վեհանձնօրէն արժեցնելով

մեր դատումները, չենք կրնար ուրանալ իր կարգին
ևւ թէ Արմաշեան դպրոցը ժամանակակից գեղեցիկ
թուականներ ապրեցաւ, կրօնադրական բեղուն կարո-
ղութիւններով ծաղկեալ շրջան մը բոլորելով և կեանք
տալով եկեղեցւոյ բեմին ու եկեղեցական դրականու-
թեան:

Սա վարդապետութեամբ թէ ժողովուրդ մը ոչ
միայն սուրով այլեւ դրչով կը կառավարուի, միեւնոյն
ատեն համոզուած ըլլալով թէ կրօնքի մը բարոյական
ներշնչումները անհրաժեշտութիւններ են տիրող
օրէնքներու կարգին. և ընդունելով նաեւ թէ կրօնա-
բարոյական կեանքի զարգացման սատարողը նոյն
ինքն եկեղեցականութիւնն է, հետեւաբար այդ մտքով
արտայայտուեցանք, կարող եկեղեցականներու ան-
հրաժեշտութիւնը և պէտքը մատնանշելով:

Մեզ չեն շահագրգռեր այն կրօնական դարբնոցա-
րանները ուր կը վերձուլուի այս օրուան ու վաղուան
հոգեւորականութիւնը: Իջ միաձին, Երուսաղէմ կամ
Արմաշ, ուր որ գոյութիւն ունին որոշ նպատակին
ձգտող միաբանութիւններ, ամէնն ալ մերն են, մեր
եկեղեցիին համար, մեր ժողովուրդին համար:

Ոչ մէկ խտրականութեամբ չենք կրնար մատնա-
ւորել զիրենք, դերադասել մէկը միւսէն:

Հայ եկեղեցւոյ հրամայական պահանջքը նոյնն է
իր ուխտին ու սպասաւորութեանը նուիրուածներուն
հանդէպ, — արդարացնել իրենց ստանձնած նուիրա-
կան պաշտօնը գործքով, գրչով եւ արդիւնաւորապէս:

Ոչ մէկ խնդիր ունինք անձնականութեանց հետ:
Կրօնքն ու եկեղեցին անձ չեն Յանչնար. նպատակն է
որ կ'անձնաւորէ միջոցը:

Ոչ աստիճանները կը շլացնեն մեզ և ոչ ալ պատ-
ւանունները: Արժանիք և ներքին մարդը, ամէն բանէ
ուսաջ:

Օրըստօրէ յարաճուն սերունդներ, նոր զգացումնե-
րով, նոր հակումներով, նոր մտածողութիւններով

խմորուելու ենթակայ, գիրենք առաջնորդող ջահերու պէտք ունին:

Մտքով ու սրտով բեղուն շրջաններ թուազրեցին մեր սրբազան նախահայրերը՝ հայ եկեղեցական պատմութեան անցեալ կեանքին մէջ: Ձեն կրնար աննշմար անցնիլ իրենց արգիւնաշատ ջանքերն ու ազգանուէր գեղեցիկ ծառայութիւնները:

Հնադարեան տաճարներ, հոյակապ վանքեր ու սրբակրօն դպրանոցներ առջի օրէն պանծալի կոթողները եղան իրենց մայրենի հաւատքին ծառայող և ցեղին աւանդապահ նկարագիրը գոյակերտող պատւական եկեղեցականութեանց. բայց իսկ եկեղեցւոյ ապագայ գոյութեան տեսակէտէն մտահոգուելով, մեր արտայայտած իղձերուն և մեր առաջադրած նպատակին հասնելու համար՝ ինքնապահպանման ու տեւականացման հարցն է որ պէտք է զբաղեցնէ անձնիւր հայ անհատ, որ ապրելու և ապրեցնելու գեղեցիկ սկզբունքը բնազդաբար կը զգայ իր ներսիդին:

Երբ մասնակի միջոցներու կը կարօտինք բացատրելու համար մեր ներքին զգացումները, պէտք ենք ընդունիլ թէ բեմին ու երաժշտութեան հետ համընթաց կրօնական գրականութիւնը այն հիանալի միջոցներէն մին է, որ ճարտար մասներու տակ քնարերգելով բարձր գաղափարներ և հոգեհմայ ներշնչումներ, գեղեցկօրէն պիտի կատարելագործեն ժողովուրդին մէջ ազնուացման, նրբացման և հոգեկան վայելքի մը սիտիարար կեանքը:

Ուժգին անհրաժեշտութեամբ կը փափաքինք մասնանշել ուրեմն այդ կրկնակ միջոցներն ու պայմանները, անկեղծօրէն անբաւական գտնելով մեզի հետ վերապրող հայ եկեղեցականութեան ցոյց տուած կրօնազրական մշակոյթը, առանց նոյն իսկ կանդ առնելու և զբաղելու պահ մը անոնց անհատական և անձնայատուկ շերտաւորումներով կամ մենասիրու-

թիւններով, և նոյն իսկ ազատ ձգելով զիրենք իրենց ներքին համոզումներուն մէջ, աներկմիտ բլլալով թէ անկարելի է արտայայտուիլ առանց զգալու, անկարելի է խօսիլ առանց հաւատքի, որքան ալ արուեստական ծպտումներով ու գիմազծումներով երեւնան անոնք իրենց սքեմին տակ ու բեմին վրայ:

Կը տեսնուի ուրեմն թէ տեսութիւններու ընթացքին սրոշ գծերու մէջ շեշտած եմ զարգացեալ եկեղեցականներու անհրաժեշտութիւնը, հակառակ սա պատմական ճշմարտութեան թէ Քրիստոսի կեանքը քարոզողներ և նոյն ինքն Քրիստոսէ ընտրեալ սրբազան առաքեալներ կը ներկայացուին մեղի իբրեւ պարզ ու հասարակ ձկնորմներու խմբակ մը:

Բայց ուշագրաւ է սա պարագան եւս թէ հակառակ որ Քրիստոսի ժամանակակից ժողովուրդներ ու հետեւողներ բացարձակ ճշմարտութեան մը մօտ կ'ապրէին և օրը օրին ականատեսներ էին, զիտենք թէ թերահաւատներ ալ գտնուեցան և աստուածային յայտնութեան մը վսեմ գաղափարականը փնտնեցին միջոցներու եւ փորձերու, հրաշքներու եւ իրողութիւններու շօշափելի եւ պայմանաւորեալ փաստերու մէջ, հաւատալու, համոզուելու եւ կարեւորութիւն ընծայելու համար անոնց:

Սրդիական մտայնութիւնը, երբ կրօնականէն աւելի կրօնական յաւակնութեամբ կը տարուի տարբալուծել, իմաստասիրել ու քննադատել մտասիրպարները կրօնական հաւատալիքներու, իր գիտութիւններուն և ստեղծագործող գիւտերուն ոյժին կրթնածամէն իրաւունք իրեն վերադասելով, անոնց տեղ ինչ պիտի ուզէր ընծայել ժողովրդային կարգ մը թերութեաւ ու տկար մարդոց, երբ մանաւանդ կը տեսնուի թէ արդիական ըմբռնումը կրօնական հաւատալիքներու և վարդապետութեանց մասին շատ զգոյշ եւ շատ ալ կասկածոտ է, իր սկեպտիկ հայեցողութեանց մէջ ներամփոփուած:

Հողերն ընդոծին շնորհաց հրաշագործ ազդեցութիւնը ուրանալը, ուրանալ պիտի ըլլար հոգեւոր կեանքի մը բարձրագոյն խորհուրդին աստուածային դերը: Բայց և այնպէս, միայն զարգացեալ ու պատրաստուած կրօնուսույցներ, ախտաճանաչի մը մասնագիտութեամբ, պիտի կարենային պայքարել գիտութեանց պատճառաբանեալ ընդվզումներուն դէմ, քաջաբար ճակատելով կրօնամերժ յարձակումներու:

Կը կրկնենք, անկարելի է ժխտել հոգևոյ շնորհաց սրբազան ներշնչումները: Բայց որքան ատեն որ արդիական միտքը պիտի ուզէ զոհացում գտնել իր հարցափորձող հետաքրքրութեանց, ուժգին նախանձանդրութեամբ օժտուած կրօնականներու պէտքը այնքան աւելի կարեւոր կը նկատենք, որոնք կրօնական հաստատ համոզումներով սնած ու պատրաստուած, իրապէս հաւատք ու համակրութիւն պիտի կրնային ներշնչել, օգտակէտ արդիւնաւորութեամբ կիրարկելով իրենց վսեմ պաշտօնը:

Մտածումներու շարքին, անզամ մը եւս անդրադառնալով ժողովրդային կարգ մը թիւր ըմբռնումներուն, որոնք եկեղեցականներու մասին թեթեւ արտայայտութեամբ մը կը բնորոշեն զանոնք իբրեւ չյաջողած դասաւիժներ կեանքի աշխարհիկ պայքարին մէջ, պէտք կը տեսնեմ կրկին տեսակէտներով քննել թէ արդեօք ի՞նչ բան է թելադրուած է այդ ժողովրդային թերեւս իրաւացի համոզումը:

Մասնաւորաբար մատնանշելով քահանայութիւնը, աւելորդ կրկնութիւն մը պիտի չըլլար ըսել թէ մեր հայ քահանայութեան դասակարգին մէջ յարմարագոյն բացառութիւններ հազիւ կը համրուին, որոնք արդարացնեն իրենց ընդգրկած պաշտօնին մասնայատուկ պայմանները:

Տեղն է ուրեմն խոստովանիլ թէ հոգեւոր վերին իշխանութիւնք իրենց բարձր իրաւասութեամբը միայն պիտի կրնան այլեւս սանձ մը դնել քմահաճ ու թեթեւօրէն կատարուած ձեռնադրութեանց, դիտուած ըլլալով որ սա կամ նա թեկնածուներ, քաջալերուելով անաչառ օրէնքի մը բացակայութենէն, ցարգ օգտագործած են սքեմը, շատ անգամ զիսուած ըլլալով ապօրէն եւ կողմնակի միջոցներով:

Թութակօրէն քանի մը մաղթանք, ժամասացութեան տարրական կարգ մը հարեւանցի ծանօթութիւններ և կամ Աւետարանի պարզ ընթերցում մը ընդհանրապէս բաւ համարուած էին քահանայացիներու համար և է մէկը, որ սրբազան հեղինակներու գրական ներշնչումները կարդալու և զանոնք հրապարակաւ վերաբաղելու սոսկական դերին մէջ իսկ գէթ գիտակցութիւնը չունէր հասկացողութեամբ արտայայտելու այդ հմայիչ ընթերցուածները:

Ձենք կրնար ոչ մէկ արդարացումներով պաշտպանել այդպիսիներուն գոյութիւնը, առարկելով թէ եկեղեցական արարողութիւնք ծիսակատարներու և մաղթանքասաց պաշտօնեաներու ալ պէտք ունին:

Ամենապարզ ժամասացութիւն մը իսկ ոչ մէկ պայման կամ չափ կրնայ պարտադրիլ մտաւորական զարգացման նկատմամբ, որու գոյութեամբ ընդհակառակը ալ աւելի արժէք պիտի ստանար կատարուած և է արարողութիւն, աւելի տպաւորիչ ու հասկնալի զանալով:

Այս մասին, կուտակրօն եկեղեցականութիւնը անհամեմատ աւելի բարձր հանգամանքներու եւ պայմաններու տակ կը ներկայանայ, և չենք յիշեր ոչ մէկ վեղարաւոր — գէթ մեզի ժամանակակից շրջաններու մէջ — որ քահանայութեան չափ թեթեւ պայմաններու ու միջոցներու տակ նետուած ըլլայ պատասխանատու եւ լուրջ ասպարէզը. հետեւաբար եպիսկոպոսը

կամ վարդապետը իրենց հմայքը պահած են ժողովրդային հոգեբանութեան վրայ:

Կը կարծենք ուրեմն թէ միակ միջոցը որ պիտի նպաստէր նաեւ քահանայութեան ասպարէզին բարձրացման, մասնաւոր օրէնքի մը անյետաձգելի կիրարկումը պիտի ըլլար, անոնց ընտրութեանը վերաբերող անաչառ պայմաններ դնող և անկողմնակալ ոգւով մը զործադրութեան դնող յատուկ կանոնադրի մը պատրաստութեամբ:

Սե այն ատեն, ո ե է թեկնածուի մը բարոյական, մտաւորական եւ ընկերային վիճակը խիստ նախաքննութեան մը բովէն անցընելով, ըստ այնմ պէտք է արտօնել ընծայացուն՝ յատուկ վկայագրով մը ներկայանալու ձեռնադրութեան վսեմ խորհուրդին:

Չի բաւեր պահանջել քահանայութեան բարձրացումը պղատոնական ոգորումներով. դրական միջոցներ պէտք են՝ օժտելու համար հայ եկեղեցին արժանաւոր քահանաներով և «ժողովուրդէն ծնած, ժողովրդին համար» ասացուածքը տառացիօրէն արդիւնաւորելու համար:

Եկեղեցականութեան վերակազմութեանը եւ անոր բարեփոխմանը, ինչպէս նաեւ արդի պայմաններու համապատասխան եկեղեցականներ ունենալու թախանձագին թելադրութիւններուս ընթացքին, խորհրդածութիւններուս իբրեւ վերջակէտ, պիտի փափաքէի անգամ մը եւս կրկնել թէ, մասնաւորաբար դրական աշխատութիւններու եւ կրօնաբարոյական հեղինակութիւններու նկատմամբ եկեղեցականներու ցոյց տալիք եռանդը պիտի հրաւիրէ իրենց վրայ ժողովուրդին յարգանքն ու համակրութիւնը: Այն ատեն պիտի ներկայանան ոչ միայն իբր հասարակ ծիսակատարներ, այլեւ գաղափարի մշակիւն՝ և ատկէ պիտի նպաստաւորուին փոխադարձաբար կղերն ու ժողովուրդը:

Կրօնական գրականութիւնը, քարոզչութեան հետ

հաւասար, ապահով միջոցներէն մին է ժողովրդակա-
նացնելու համար կրօնի ներշնչումները ու ոգին ամէն
երգիքի տակ:

Մտաւորական մարդը՝ նոյնացած հոգեւորական
մարդուն մէջ՝ շատ աւելի տպաւորիչ պիտի դարձնէ
սքեմին լրջութիւնը, եւ այնքան պատկառելի պիտի
ըլլայ որքան ներքին մարդը, իր ներկայացուցած ար-
ժանիքներով:

Իր պաշտօնին կարեւորութեամբը ծանօթ և հայ
եկեղեցականութեան բարձրացումին նախանձախնդիր
հոգեւորականի մը հետեւեալ տողերը նոյնութեամբ
կ'արտատպենք, իբրեւ լաւագոյն վերջաբանը որ կը
խտացնէ իր մէջ մեր նպատակին բովանդակ միտքն
ու իմաստը.


Ա՛լ Տերիք է որքան մե՛նք, եկեղեցականներս, օրին ապ-
րող, սովորական եւ ընթացիկ գործունէութեամբ բաւակա-
նանալով, միշտ զբաղեցանք երկրորդական եւ աւօրեայ
հարցերով, մոռնալով էականը, երբ չտիրած քայլերով ու
խնամեալ ծրագրով հարկ է եղբայրական գործակցութեամբ
փութանք աղգային դարբնոցարանին մէջ կուել կափելու
կերտուածքը բարոյական եւ մտաւորական վերածնունդին
վաղուան հայտնութեան:

Ու ամէն բանէ առաջ եւ գործէն առաջ անհրաժեշտ
է գործիքը պատրաստել:

Հայ եկեղեցիէն առաջ պէտք է Հայ եկեղեցականը բարեկարգել, որով հնար պիտի ըլլայ մեզ պատրաստել վաղ-
ուան սերունդին համար նոր եւ, առույգ եկեղեցականութիւն
մը, որ ժամանակին համապատասխան մտքի մշակոյթին
հետ եւ սակէ աւելի ունենալով զօրեղ դաստիարակութեամբ
կազմուած ուժեղ նկարագիր մը, առանց տատանելու փչող
քամիներէն, նպատակին գիտակցութեամբ ոգեւորուն, նեւ-
ուի ապարէզ, իբրեւ կրօնական վերածննդեան առաքեալ:

Հայ եկեղեցին, որ այնքան մեծ եւ փառաւոր պատմա-
կան դեր մը կատարած է աղգային դարաւոր կեանքին մէջ
եւ Հայ լեզուին հետ եղած է զօղակապը ցերեցան եղած
ժողովուրդին, այսօր ալ պէտք ունի վերապրելու, որ ինքն
ալ իր կարգին կենդանացնէ ժողովուրդը:





ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Եկեղեցին՝ ժողովրդային առաւելագոյն մեծամասնութեան հոգեկան վերագարթութիւնն և բարոյական կեանքին առաջապահ ջանակիրն է, և իր հոյակապ դերին մէջ իրաւունք ունի պահանջելու որ զինքը ներկայացնող եկեղեցականութիւնը հանրութեան մշտակայ նախանձախնդրութեան առանցքը մնայ միշտ:

Աթոռներու միջև անխտրականութեան ոգին հրաշքներ կրնայ գործել, և հոգեւորական ուխտեալները, իրենց հաւաքական գոհաբերութիւնները մէկտեղելով, կարող են լաւագոյն դիրքի մը վրայ պահել կրօնքի այդ բարձրագոյն ներշնչարանները:

Էջմիածնայ Մայր Աթոռը, որ ցարդ գերագոյն հեղինակութեամբ վարած է Հայ Առաքելական վերին իշխանութեան իր դերը, որքան ալ աննպաստ պայմաններու ցանցի մը մէջ գտնուի, չի կրնար դադրիլ ընդհանրական հովուապետի և սրբազան գահակալի իր հոգեւոր հմայքէն ու դիրքէն:

Պատմական տուեալներ, դարաւոր աւանդութիւններ և կրօնազաղափարական կորիզը Հայ Եկեղեցոյ ուղղափառ դաւանութիւններուն, անքակտելիօրէն կապած են լուսաւորչական գահը և իր համասփիւռ ժողովուրդը, իրարու մօտ, իրարու մէջ, իրարու համար:

Այս հաւաքական պայմաններուն տակ ներկայացող վերին իշխանութենէն կ'ակնկալուի հրամայել հմուտ և հեղինակաւոր եկեղեցականներէ ընտրեալ

համագումար ժողովի մը կազմութիւնը, որ լիազօրութիւնը պիտի ունենայ Եկեղեցւոյ և եկեղեցակահոթեան պարտքի և իրաւունքի ճշգրիտ օրէնագրութեան հիման վրայ բանաձեւել արդի պայմաններու համապատասխան կանոնագիր մը, որ բովանդակէ իր մէջ եկեղեցւոյ ներքին ու յարաբերական, արարողական ու ծիսական սովորութեանց և անոնց կիրարկումին նկատմամբ հարկեցուցիչ բարեփոխութիւնները:

Չենք կրնար երկմտիլ թէ հայ կրօնասէր ժողովուրդը ընդ առաջ պիտի երթայ իր դարաւոր Եկեղեցիին բարելաւմանը ձգտող ամէն տեսակ կարգադրութեանց, և ընդհանուր Հայութեան ուղղուած կոչ մը արձագանգ պիտի գտնէ ամէն սրտերու մէջ ու յառաջ պիտի բերէ այն նիւթական ու բարոյական աջակցութիւնները որոնք անհրաժեշտ են եկեղեցական լիազօր համագումարը լաւագոյն պայմաններու տակ արդիւնաւորելու համար:



ՆԻԹԵՐՈՒ ՑԱՆԿԸ

	Էջ
Հայ եկեղեցականութիւնը եւ իր դերը	3
Հայ կղերը	5
Քահանայութիւն	12
Համագործակցական	17
Կրօնի Գաղափարականը	21
Հոգեւոր ասպարէզ	26
Գրչի դերը	30
Վաղուան եկեղեցին	34
Պաշտօն եւ պաշտօնեայ	41
Անդրադարձում	48
Առաջարկ մը	59

ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ

	Էջ
Բարձր. Տ. Եղիշէ Ս. Պատրիարք Գուրեան	9
Գեր. Տ. Խոսրով Եպս. Պէհրիկեան	13
» Տ. Մեսրոպ » Նարոյեան	19
» Տ. Գնէլ » Գալէմբերեան	24
Արժ. Տ. Զարմայր Ա. Քինյ. Կէօզիւրեան	39
Գեր. Տ. Ղեւոնդ Եպս. Գուրեան	43
» Տ. Գրիգորիս Եպս. Պալաքեան	57

Mr. P. Meroujon
32 Rue Manbeuge
(9^a) Paris
